«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 17
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 19
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 22
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 29
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 36
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 40
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 45
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 49
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 54
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 57
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 60
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 68
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 71
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 74
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 75
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 76

ՆԱԽԱԲԱՆ

Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԱՏՊՔ, Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԱՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ ՀՀ ԿԳՄՄՆ-ի Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի առաքելությունը տարածաշրջանում միջին և նախնական մասնագիտական կրթությամբ տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստումն է՝ ծառայելով աշխատաշուկայում համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով մասնագետներ զինելու գործին: ԱՏՊՔ-ն, հանդիսանալով տարածաշրջանային քոլեջ, իրականացնում է ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներն ընդգրկող կրթական ծրագրեր, որոնք համապատշաճ են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և միևնույն ժամանակ համահունչ են Քոլեջի առաքելությանն ու անվանմանը: ԱՏՊՔ-ն սահմանել է այնպիսի ռազմավարական նպատակներ, որոնք իրատեսական են և ամբողջությամբ դրված են իրականացվող կրթական գործընթացների հիմքում: Շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտնման համար սահմանված են սկզբունքներ, մոտեցումներ, առկա են գործուն մեխանիզմներ, և փորձագիտական խումբն արժևորում է, որ Քոլեջի համար ճանաչելի են շահակիցների կարիքները, որոնք կառավարչական և ուսումնական գործընթացների պլանավորման և իրականացման մուտքային տվյալներ են հանդիսանում: Քոլեջում սահմանված նպատակների իրականացման արդյունքների գնահատումը առավել քան հստակ է՝ ապահովված է համապատասխանությունը պլանավորված և իրականացված գործողությունների, սահմանված և իրականացված ժամանակացույցի, սահմանված պատասխանատուների և կատարողների, նախատեսված անհրաժեշտ ռեսուրսների և օգտագործված ռեսուրսների, ակնկալվող արդյունքների և ձեռքբերված արդյունքների միջև՝ փաստելով թիրախային և արդյունքային ցուցիչների ներդաշնակության մասին:

ԱՏՊՔ-ն իրականացնում է 9 միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Սառնարանային տնտեսություն», «Դեղագործություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հաշվապահական հաշվառում», «Ատամնատեխնիկական գործ»: Քոլեջն իրականացնում է նաև նախնական մասնագիտական կրթական 2 ծրագիր՝ «Խոհարարական գործ», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ի տարբերակված ՄԿԾ-ները նպաստում են մարզի աշխատատեղերի սպասարկմանը: Քոլեջը ներդրել է ՄԿԾ-ների մասնագրերը, որոնցում սահմանված են ՄԿԾ-ների նպատակները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները, բովանդակությունը, կառուցվածքը, ընտրված դասավանդման,

ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները, որոնք ընդհանրության մեջ հիմք են վերջնարդյունքահենք ուսուցում իրականացնելու համար։ Դրական է գնահատվում, որ ՄԿԾ-ներում առկա են բարելավումների դեպքեր, և փորձագիտական խմբի կարծիքով դրանք շարունակական դարձնելու պարագայում զգալիորեն կբարձրանա ՄԿԾ-ների արդյունավետությունը։ Փորձագիտական խումբը գնահատում է Քոլեջի ջանքերը՝ միտված ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը, սակայն մտահոգություն ունի առա այն, որ բացի նախաավարտական պրակտիկաներից, այլ արտադրական պրակտիկաներ չեն նախատեսված։ Արտադրական պրակտիկաները կարող են նպաստել պրակտիկ փորձի հիման վրա մասնաագիտական կարողությունների զարգացմանն ու հմտությունների ձևավորմանը։ Նշյալի համտեքստում փորձագիտական խումբը հակված է այն մտքին, որ առաջիկայում ԱՀՈՒ-ների ներդրմամբ Քոլեջն արդեն-իսկ կավելացնի պրակտիկաների քանակը և կբարելավի դրանց իրականացման մեխանիզմները։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ն ՌԾ նպատակների իրականացման համար ապահովված է անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմով։ ՊԴ կազմի ընտրության ժամանակ ԱՏՊՔ-ն առաջնորդվում է կրթական չափորոշիչներում նկարագրված դասավանդողներին ներկայացվող պահանջներով, առկա են «Պաշտոնի անձնագրեր», որոնց մեջ ամրագրված են կրթական ծրագրերում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները։ Դրական է գնահատվում, որ քոլեջում 2018թ.-ից քոլեջի դասախոսական կազմը համալրվում է մրցույթային սկզբունքով։ Քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը կայուն է։ Փորձագիտական խումբը նշում է, որ աշխատողների շուրջ 10%-ը Քոլեջի շրջանավարտներ են։ Շրջանավարտներին աշխատանքի ընդունելու նման քաղաքականությունը դիտարկվում է Քոլեջի տված կրթության նկատմամբ վստահության դրսևորում, որի արդյունքում Քոլեջի անձնակազմը համալրվում է տեղացի երիտասարդ, հեռանկարային կադրերով։ Ողջունելի մոտեցում է, որ ՈՆԱԿ-ի կողմից իրականացված հարցման արդյունքներով սահմանված շեմը (80% դրական կարծիք) չհաղթահարած դասախոսները ստանում են թերությունների վերացման հանձնարարականներ։ Որոշակի ժամանակ հետո անցկացվում է կրկնակի հարցում՝ վերհանված խնդիրները կարգավորելու նպատակով։ Գովելի է, որ քոլեջի դասախոսները կազմում են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիո), սակայն դրանք ծառայում են միայն դասընթացների պլանավորման և իրականացման գործիք՝ դասընթացների գնահատմանը ու վերանայումանը անդրադարձ չի կատարվում։ Փորձագիտական խմբի պնդմամբ, դասախոսների պորտֆոլիոների՝ ըստ նպատակայնության գործարկման պարագայում զգալիորեն կբարելավվի դասընթացների արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ի ռեսուրսային բազան բարվոք վիճակում է և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը։ Որպես Քոլեջի առավելություն, փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ռեսուրսատար մասնագիտությունների դասասենյակ-արհեստանոցներն ու լաբորատորիաները տեխնիկապես հագեցած են, ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով և ռեսուրսներով, զուգահեռաբար՝ Քոլեջի տրամադրած ուսումնական նյութերը բավարարում են ՄԿԾ-ների գործնական պարապմունքների իրականացմանը։ Ամփոփման շրջանակում հարկ է նշել, որ Քոլեջն առանձին

մասնագիտությունների համար ունի համակարգչային ռեսուրսների կարիք, և փորձագիտական խմբի կարծիքով այդ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը պայմանավորված է համակարգչային ռեսուրսների համալրմամբ: Այս առումով Քոլեջը վեր է հանել այդ կարիքը և որոշակի քայլեր է ձեռնարկում համակարգչային ռեսուրսների բացը լրացնելու առնչությամբ:

Ստույգ է, որ Քոլեջի գործունեությունն ապահովվող ֆինանսական ռեսուրսների կառուցվածքում գերակշռում են ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտները, սակայն առկա են նաև մուտքեր ուսման վարձավճարներից, որոնք վերջին տարիներին դինամիկ աճ են ցուցաբերել: Լրացուցիչ կարճաժակետ դասընթացներից, վարձակալական վճարներից և դրամաշնորհային ծրագրերից մուտքերը Քոլեջի բյուջեի համար կայուն եկամտի աղբյուր չեն, և, համապատասխանաբար անհրաժեշտություն կա դիվերսիֆիկացնել Քոլեջի ֆինանսական ռեսուրսները: Փորձագիտական խումբն իր գոհունակությունն է ներկայացնում առ այն, որ Քոլեջը տարեկան կտրվածքով իրականացնում է լաբորատոր ուսումնական նյութերի, մասնագիտական սարքավորումների և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսեր, դրամական միջոցներ է հատկացնում նաև պրակտիկաների կազմակերպման համար՝ նպաստելով գործնական պարապմունքների իրականացմանը և ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Գովարժան է, որ ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման տարբեր մեխանիզմներ կիրառելով՝ Քոլեջն իրականացնում է ռեսուրսներից բավարարվածության գնահատում և կարիքի վերհանում: Ըստ այդ արդյունքների՝ ուսանողներն ու դասախոսները տրամադրվող ուսումնական ռեսուրսների օգտակարությունից և հասանելիությունից բավարարվածության բարձր ցուցանիշ են ապահովել:

Կառավարման գործընթացները դիտարկելիս, փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջի կառավարչական գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթերով, գործում է ՊԻԳԲ շրջափուլը, որն ամփոփվում է տնօրենի ընթացիկ գործունեության արդյունքները ներկայացնող, ՌԾ-ի պլան-ժամանակացույցների կատարողականների արդյունքներն ամփոփող և վերլուծություններ պարունակող տարեկան հաշվետվություններով: Հատկանշական է, որ ընդգծված են նաև լուծման կարիք ունեցող խնդիրները: Ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության շրջանակում փորձագիտական խումբը ներկայացնում է այն դրական ամփոփումը, որ որ քոլեջի բյուջետային և արտաբյուջետային միջոցների բաշխումն ընդհանուր առմամբ համահունչ է ՌԾ-ով սահմանված առաջնահերթություններին, սակայն միևնույն ժամանակ Քոլեջի աշխատակիցներին տրամադրվող լրավճարների տարբերակման մեխանիզմները հստակեցման կարիք ունեն:

Փորձագիտական խումբն արժևորում է, որ Քոլեջում մշակվել և գործողության մեջ են կարճաժամկետ և երկարաժամկետ պլանները, նախանշված են առաջընթացի գնահատման թիրախային ցուցիչները, որոնք ընդհանրության մեջ համընկնում են ձեռքբերված արդյունքային ցուցիչներին, ըստ տարիների պլան-ժամանակացույցներն ու դրանց կատարողականները ծրագրված գործողությունների և միջոցառումների իրականացման հաջորդականությամբ ևս համադրելի են՝ ապահովելով գործառնական կառավարման արդյունավետությունը: Նշյալի կոնտեքստում հարկ է առնձնացնել, որ ստորաբաժանումների հաշվետվությունները չեն

ամփոփում աշխատանքային պլանների կատարողականների արդյունքները, դրանք հիմնականում քանակական վերլուծություններ են և չեն նպաստում բովանդակային խնդիրների բացահայտմանը: Այս հարցի շրջանակում Քոլեջն ինքն է ընկալել առկա խնդիրը և պլանավորել ներդնել հաշվետվությունների ներկայացման հատուկ ձևաչափ:

Փորձագիտական խումբը գովելի է համարում, որ Քոլեջում յուրաքանչյուր տարի իրականացվում է ներքին գնահատում, կազմակերպվում են ներքին և արտաքին շահակիցների պարբերաբար հարցումներ, որոնց վերլուծությունները նպաստում են Քոլեջի առանցքային խնդիրների վերհանմանը: Փորձագիտական խումբը ընդգծում է՝ արտաքին և ներքին ռիսկերի կառավարման տեսանկյունից ԱՏՊՔ-ն ցուցաբերում է պատասխանատու և կայուն վարքագիծ՝ հաշվի առնելով երկրում առկա իրողություններն ու մարտահրավերները:

Քոլեջը կրթության որակի շարունակական բարձրացումը համարում է ռազմավարական, որի իրականացման համար ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված գործողությունների թիրախային և արդյունքային ցուցիչները համահունչ են՝ փաստելով Քոլեջում կրթության որակի բարելավման գործընթացների արդյունավետ իրականացման մասին: Դրական է, որ քոլեջում հարցումներն իրականացվում են համապատասխան կանոնակարգերի հիման վրա: Հարկ է առանձնացնել՝ այդ հարցումներն ընդհանուր առմամբ խնդիրներ շեշտադրող են և քննարկվում են ՈՆԱ հանձնաժողովում՝ ունենալով վերլուծություններ, ամփոփումներ, առանձնացված են թիրախային խնդիրներն ու անհրաժեշտ բարելավումները: Դրական է որ, այդ բարելավումները ընդգրկված են աշխատանքային պլաններում, սակայն դրանց կատարման արդյունքները գնահատված չեն: Բացի հարցումներից, Քոլեջում իրականացվում են նաև դասալսումներ, քննարկումներ, համադրական վերլուծություններ, հանդիպումներ արտաքին շահակիցների հետ: Փորձագիտական խումբն արժևորում է ուսանողների միջոցով Քոլեջում որակի մշակույթի տարածման հաջողված փորձի առկայությունը, որն անխոս նպաստել է Քոլեջում ՈԱ գործընթացների բարելավմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ում ուսանողների հոսքը կայուն է, առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման գործուն մեխանիզմներ: Հատկանշական է, որ դիմորդների քանակը գերազանցում է ընդունվողների քանակին՝ փաստելով ՄԿԾ-ներում ձևավորված մրցույթի մասին:

Հետազոտական ոլորտում քոլեջի գործունեությունը դիտարկելիս փորձագիտական խումբն առանձնացնում է հետևյալ ամփոփումները՝ ԱՏՊՔ-ում առկա է հետազոտական աշխատանքների կատարման ոլորտում քոլեջի նպատակները, աշխատանքների ձևաչափերը ներառող հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, սակայն վերհանված և վերլուծված չեն տարածաշրջանի հետազոտական կարիքները, հետազոտական առաջնահերթությունները համահնչեցված չեն այդ կարիքներին, քոլեջի ՌԾ-ով սահմանված չեն հետազոտական հետաքրքրությունների և առաջնահերթությունների շրջանակը: Նշյալի հետ կապված փորձագիտական խումբն ունի իր հստակ դիրքորոշումը՝ հետազոտական առաջնահերթությունները սահմանելու, տարածաշրջանի կարիքները վերհանելու և դրան համահունչ երկարաժամկետ ու կարճաժամկետ պլաններ մշակելու պարագայում քոլեջում կխթանվի հետազոտական գործունեության իրականացումը: Փորձագիտական խմբի կողմից դիտարկվող ՄԿԾ-ների կուրսային աշխատանքներում, ռեֆերատներում, առանձին

դասընթացների ընթացիկ հանձնարարականներում ուսանողների սեփական տեսակետի, ստեղծագործական մտքի դրսևորումներն արտահայտված չեն: Հարկ է նշել փորձագիտական խմբի դրական արձանագրումն առ այն, որ Քոլեջի որոշ ՄԿԾ-ներում առկա են հետազոտական տարբեր պարունակող աշխատանքներ, որոնք համակարգելու, խորքային վերլուծելու և որպես հաջողված փորձ՝ բոլոր ՄԿԾ-ներում տարածելու պարագայում կխթանվի ուսանողների ստեղծագործական մտքի և քննադատական-վերլուծական մտածողության զարգացումը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ՄԿԾ-ներում դիպլոմային աշխատանքներ ներդրված չեն: Դրանք ևս կարող են զարգացնել հետազոտական աշխատանք կատարելու ուսանողների կարողությունները:

Ընդհանրության մեջ փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում ներդրված հաշվետվողականության մեխանիզմը ներառում է ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքներ՝ նպաստելով Քոլեջի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը: Քոլեջի կայքէջում տեղադրված են գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, քաղաքականությունները, հաշվետվությունները: Հաշվետվություններում առկա են քանակական վերլուծություններ, ամփոփումներ, բարելավման քայլեր, այդուհանդերձ որոշ հաշվետվություններում որակական վերլուծությունները և համադրությունները մասամբ են կատարված: Փորձագիտական խմբի դիտարկումը հետևյալն է՝ դրանք համապարփակ վերլուծական տեսքի բերելու պարագայում զգալիորեն կբարձրանա հաշվետվողականության արդյունավետությունը:

Գովարժան է, որ Քոլեջում գործում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, ուր իրենց մասնակցությունն ունեն ուսանողները, դասախոսները, շրջանավարտները, ՈՆԱԿ պատասխանատուն: ԱՏՊՔ-ի ուսանողները, մասնակցելով տարբեր միջոցառումների, էքսպոների, վերապատրաստումների, մրցաշարերի, կամավորական ծրագրերի և աշխատանքների, բարձրացրել են հասարակության իրազեկվածությունը Քոլեջում իրականացվող գործընթացներից, ինչպես նաև բարձրացել է Քոլեջի վարկանիշը:

Փորձագիտական խումբն իր մտահոգությունն է ներկայացնում առ այն, որ ԱՏՊՔ-ի ՌԾ-ում ձևակերպված չեն արտաքին կապերի ու միջազգային համագործակցության ոլորտում քոլեջի հետաքրքրություններն ու հնարավորությունները: Բացի այդ՝ Քոլեջը գործընկերային կապերի հաստատման և գործատուների ներգրավման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր չի մշակել: Փորձագիտական խումբը կարծում է, որ վերլուծելով և գնահատելով առկա գործընկերային համագործակցությունների հնարավորությունները՝ սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պարագայում գործատուների ռեսուրսների փոխշահավետ և նպատակային օգտագործումը կարող է համագործակցության նպաստավոր միջավայր ստեղծել: Արդյունքում՝ Քոլեջը հնարավորություն կունենա լիարժեք օգտագործել գործատուների ներուժը իր խնդիրների լուծման և կրթական գործընթացների բարելավման նպատակով: Մտահոգիչ է Քոլեջի ուսանողների և դասախոսների մասնագիտական անգլերենի իմացության ոչ բավարար վիճակը, և փորձագիտական խմբի կարծիքով Քոլեջն այս խնդրի լուծման համար հստակ քայլեր ձեռնարկելու կարիք ունի

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Մարզում միակ տարածաշրջանային պետական քոլեջը:

2. Դիմորդների կայուն հոսքի ապահովում։ Դիմորդների թվի գերազանցում ընդունվողների թվի նկատմամբ։
3. Կառավարչական գործընթացների արդյունավետությունը։
4. Գործունեության պլանավորման և գնահատման ցուցիչների համադրելիությունը։
5. Տարբերակված և տարածաշրջանի աշխատաշուկայի սպասարկմանը միտված ՄԿԾ-ների առկայությունը։
6. Կայուն դասախոսական կազմը։
7. Շրջանավարտներին դասախոսական կազմում ներգրավելու քաղաքականությունը։
8. Բարվոք շենքային պայմաններ, տեխնիկապես հագեցած լսարան-լաբորտորիաները։
9. Արտաբյուջեի առկայությունը, ֆինանսական ռեսուրսների բաշխումն ըստ ՄԿԾ-ների կարիքների։
10. Ներդրված հաշվետվողականության համակարգը։
11. Կանոնակարգված ՈԱ գործընթացները։
12. Որակի մշակույթի տարածման հաջողված փորձի առկայությունը։

Հաստատության թույլ կողմերն են.

1. Աշխատանքային պլաններ-կատարման հաշվետվություններ անհամապատասխանությունը։
2. ՌԾ-ում հետազոտական հետաքրքրությունների և առաջնահերթությունների սահմանված շրջանակի բացակայությունը։
3. ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի բացակությունը։
4. Գործատուների հետ համատեղ ռեսուրսների օգտագործման քաղաքականության բացակայությունը։
5. Սակավ համակարգչային ռեսուրսները։
6. Միջազգային և տեղական համագործակցությունների սակավությունը։

Հիմնական խորհրդատվություններ.
Առաքելությունը և նպատակները

1. Խթանել ներքին և արտաքին շահակիցների նախաձեռնողականությունը ՌԾ-ի մշակման, նպատակադրումների սահմանման և թիրախային ցուցիչների սահմանման գործում։
2. Կատարելագործել շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմները։

Կառավարումը և վարչարարությունը

3. Ապահովել դրամական մուտքերի բազմազանեցումը։
4. Մեծացնել ներքին և արտաքին շահակիցների գործուն մասնակցությունը քոլեջի կառավարչական գործընթացներին։

5. Բոլոր հաշվետվություններում ներառել քանակական և որակական ամփոփ վերլուծություններ՝ ներդնելով աշխատանքային պլանների հետ համադրելիության բաղադրիչը: Աշխատանքային պլանները բխեցնել նախորդ տարվա ՌԾ-ի պլան-ժամանակացույցի կատարողականից:
6. Մշակել և ներդնել աշխատակիցների լրավաճարների տարբերակման մեխանիզմները:
7. Մշակել բարելավումները ծրագրային փաստաթղթերում ներառելու և գործարկելու մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Մշակել և գործարկել ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:
9. Ներդնել ՄԿԾ-ների բարելավման գործում արտաքին շահակիցների ներգրավումը խրախուսող մեխանիզմներ:
10. Մշակել և ներդնել բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգեր:
11. Ներդնել ուսանողների ինքնուրույն աշխատանքներում ակադեմիական ազնվությունն ապահովող գործուն մեխանիզմներ:
12. Մեծացնել արտադրական պրակտիկաների ծավալը և ներդնել դրանց արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ:
13. Հստակեցնել կուրսային աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ ներառելով վերլուծական, ստեղծագործական բաղադրիչը:

Ուսանողները

14. Ներդնել վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց:
15. ՈՒսանողներին պարբերաբար իրազեկել Քոլեջի խորհուրդների աշխատանքի մասին:
16. ՈՒսանողների իրավունքների պաշտպանության կոնտեքստում ուժեղացնել ուսանող-ուսանողական խորհուրդ կապը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17. Մշակել հստակ ժամանակացույց նեղ մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համար:
18. Զարգացնել դասախոսների պորտֆոլիոները՝ որպես դասընթացի պլանավորման, իրականացման, գնահատման և վերանայման ամբողջական փաթեթ:
19. Դասալսումներում ներդնել մասնագիտական կարողությունների գնահատման գործիքներ:
20. Պրակտիկ ոլորտից ներգրավել դասախոսներ:

Հետազոտությունը

21. ՌԾ-ով հստակ սահմանել հետազոտության ոլորտում քոլեջի հետաքրքրություններն ու հավակնությունները։
22. Հետազոտական առաջնահերթությունները համահնչեցնել տարածաշրջանի կարիքներին։
23. Ընդլայնել և հստակեցնել հետազոտության առաջընթացի գնահատման ցուցիչների շրջանակը։
24. Կատարելագործել հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականությունը, մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ պլաններ։
25. Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացնել նաև դիպլոմային աշխատանքների միջոցով։
26. Ներդնել սեղծագործական մտքի և քննադատական-վերլուծական մտածողության զարգացմանը նպաստող հանձնարարականներ։
27. Խթանել դասախոսների հետազոտական աշխատանքների իրականացումը։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

28. Դիվերսիֆիկացնել ֆինանսական ռեսուրսները՝ եկամտի կայուն աճ ապահովելու նկատառումով։
29. Քոլեջի բյուջեից դրամական միջոցներ ազատել ռեսուրսները համակարգիչներով համալրելու համար՝ ապահովելով առանձին ՄԿԾ-ների նպատակների արդյունավետ իրականացումը։
30. Շենքային պայմանները համապատասխանեցնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին։
31. Ձևավորել գործատուների հետ համատեղ ռեսուրսների օգտագործման համագործակցություններ։

Հասարակական պատասխանատվությունը

32. Ներդնել հաշվետվությունների ձևաչափ՝ ապահովելով համապարփակ վերլուծական բաղադրիչը։
33. Զարգացնել հետադարձ կապի ապահովման մեխանիզմները։
34. Մշակել և ներդնել հետադարձ կապի արդյունավետության վերլուծության գործուն մեխանիզմներ։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

35. Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականություն և ընթացակարգեր։
36. Հստակեցնել ԱՏՊՔ ակնկալիքները արտաքին կապերի և միջազգայնացման տեսանկյունից։
37. Բարձրացնել ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակը։

38. Ընդլայնել տեղական և միջազգային գործընկերային համագործակցությունների շրջանակը:
39. Վերլուծել և գնահատել արտաքին համագործակցությունների հնարավորությունները:

Որակի ներքին ապահովման համակարգը

40. Ապահովել մշտադիտարկման բոլոր գործիքների կիրառման պարբերականությունը:
41. Դարձնել համադրելի ՈՆԱ կենտրոնի աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները:
42. Կատարելագործել հարցումները՝ ապահովելով հարցման արդյունքների վստահելիությունը:
43. Գնահատել կատարված բարելավումների արդյունքները:

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30 դեկտեմբերի 2022թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Միհերյան-** Տնտեսական գիտությունների թեկնածու, Դոցենտ, Եվրոպական համալսարան, «Կառավարում» ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Աշոտ Ավետիսյան-** Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ, պրակտիկայի բաժնի վարիչ, որակի կառավարման հանձնաժողովի նախագահ, դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Էլեն Հարությունյան** – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» ֆակուլտետի դեկանի տեղակալ, «Ընդհանուր մաթեմատիկական կրթության» ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Մարինե Նադոյան** – Երևանի հենակետային բժշկական քոլեջի 3-րդ կուրսի ուսանողուհի փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քարտուղարության մասնագետ՝ Լիլիթ Ղազարյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱՏՊՔ–ն 28.02.2022թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (15.03.2022թ.) ԱՏՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԱՏՊՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է

իրականացրել ՄՈՒՀ-ի հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովները տեղի են ունեցել 2022թ. փետրվարի 21-22-ը և մարտի 3-4-ն ընկած ժամանակահատվածում, որոնց ՄՈՒՀ-ից մասնակցել է 6 աշխատակից: 4-օրյա աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ:

Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

ԱՏՊՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 24.06.2022թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 16 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի, ուսանողների կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է 1 աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատակցի աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը որոշ դեպքերում հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

ԱՏՊՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր Քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝

պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[1]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն: Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ Քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախանական այց

Հաշվի առնելով այն փաստը, որ ԱՏՊՔ-ն գտնվում է Արարատի մարզում՝ Քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց փորձագիտական այցից առաջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում Քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. հոկտեմբերի 17-20-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (16.11.2022թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր

հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 2–ին: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 14.12.2022թ: Նախնական զեկույցի վերաբերյալ ԱՏՊՔ-ն դիտարկումներ չի ներկայացրել: փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 30.12.2022թ.:

_____

Լիլիթ Ղազարյան
Փորձագիտական խմբի համակարգող

30 դեկտեմբերի 2022թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Պատմություն. ՀԽՍՀ պրոֆտեխնիկական կրթության պետական կոմիտեի՝ 1970թ. հուլիս որոշմամբ՝ Արտաշատ քաղաքում ստեղծվել է Արտաշատի թիվ 4 պրոֆտեխնիկական ուսումնարանը: 1984թ. այն վերակազմավորվել է Արտաշատի թիվ 55 ՄՏՈՒ-ի, իսկ ՀՀ կառավարության՝ 10.10.2002թ. թիվ Ա1621-Ա որոշմամբ՝ Արտաշատի պետական Քոլեջի: 2007թ. ՀՀ վարչապետի որոշումով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ՝ Քոլեջը մրցութային կարգով ընդգրկվել է Եվրոպական միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված՝ 12 բազմագործառութային քոլեջների ցանկում և ՀՀ կառավարության՝ 03.03.2011թ. N 199-Ն որոշմամբ վերանվանվել է «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի:

Հիմնադրման օրվանից Քոլեջի գործունեությունն ուղղված է եղել միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթությամբ որակյալ մասնագետների և արհեստավորների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցակցության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովմանը: Համագործակցում են Արտաշատի զբաղվածության կենտրոնի, ՍՊԸ կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի հետ: Քոլեջը ունի սերտ համագործակցություն «ԱՊՀ երկրներ Ֆրանսիա-Ռուսաստան» ասոցիացիայի հետ:

2.Կ*րթություն*. ԱՊՏՔ սովորողների ուսուցմը կազմակերպում է հիմնական, միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնելով: Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ 2021-2022 ուսումնական տարում Քոլեջում իրականացվում են 9 միջին և 2 նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրեր տարածաշրջանի տնտեսության տարբեր ոլորտներում մասնագետներ պատրաստելու համար: ՄՈՒՀ-ն ունի միջին մասնագիտական 9 կրթական ծրագիր՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Սառնարանային տնտեսություն», «Դեղագործություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հաշվապահական հաշվառում», «Ատամնատեխնիկական գործ», «Խահարարական գործ», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»: Վերջին 2-ը նախնական մասնագիտական կրթական ծրագրեր են: Քոլեջի կարևորագույն ներուժը և իր առաքելությունը կատարելու գրավականն է հանդիսանում մանկավարժական և մասնագիական կարողություններով օժտված դասախոսական կազմը: ԱՏՊՔ-ի կարևորագույն խնդիրներից է որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման, համալրման, զարգացման և սահուն սերնդափոխության իրականացումը: Քոլեջը փորձում է ապահովել ժամանակակից կրթությանը պահանջներին համապատասխան կրթական

միջավայր. բավարարող ենթակառույցներ և նյութատեխնիկականապես հագեցված լսարաններ, պարբերաբար համալրվող գրադարանային ֆոնդ:

3. Հետազոտություն. Համաձայն Քոլեջի գործող ռազմավարական ծրագրի՝ Քոլեջը ձգտում է ձևավորելու միջավայր, որը հնարավորություն կստեղծի ներքին շահակիցների ինքնակրթվելու և զարգանալու, այդ նպատակով ներդրվել է հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, որը նկարագրում է Քոլեջի հետաքրքրությունները հետազոտական ոլորտում:

4. Միջազգայնացում. Քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ անելիքները շատ են, քանի որ մինչ այժմ համապատասխան կառույցներ չկան: Ներկայումս մշակման փուլում են Քքոլեջի կայքէջի անգլերեն և ռուսերեն տարբերակները, ինչը կնպաստի արտաքին կապերի հաստատմանը, համագործակցությանը և միջազգայնացմանը:

5. Որակի ապահովում. Քոլեջն իր ռազմավարությամբ նպատակ ունի զարգացնելու դեռևս 2015 թ.-ից ներդրված որակի ներքին գործընթացների իրականացման մշակույթը, բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետությունը, ունենալ ՈԱՇ–ի պահանջներին համահունչ կրթական ծրագրեր ապահովել դրանց պարբերական վերանայումը և դրանք իրականացնել գիտակ դասախոսական կազմով: Քոլեջի բոլոր գործընթացների համար իրականացնել գնահատումներ և մշակել դրանց արդյունավետության բարձրացման մեխանիզմներ: Զարգացնել համագործակցությունը ներքին և արտաքին շահակիցների հետ, վեր հանել նրանց խնդիրները, մշակել բարելավման մեխանիզմներ՝ ապահովելով հաշվետվողականությունը: Քոլեջի Որակի ապահովման քաղաքականությունը իրականացվում է ԱՏՊՔ-ի առաքելության և ռազմավարական նպատակներին համապատասխան, ինչպես նաև կանոնակարգերի հիման վրա: Որակի ապահովման համակարգի վերանայման նպատակն է որակի ապահովման համակարգի բարելավումը և կատարելագործումը:

Որակի ապահովման վերանայումը հիմնված է ՊԻԳԲ մոդելի վրա՝

- Պլանավորում- որակի ապահովման համակարգի վերանայման պլանավորում
- Իրագործում- վերանայման իրականացում
- Գնահատում- Հաշվետվողականություն
- Բարելավում- ուղղիչ գործողությունների պլանի մշակում և իրականացում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության Զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ) ներառում է 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածը, ուր ներկայացված են Քոլեջի տեսլականը, առաքելությունը, հիմնարար արժեքները, նպատակները, խնդիրները և դրանց իրագործման միջոցառումները: Քոլեջի առաքելությունն է՝ «Ապահովել տարածաշրջանում միջին և նախնական մասնագիտական կրթությամբ տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստումը՝ ծառայելով աշխատաշուկայում համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով մասնագետներ զինելու գործին»: ԱՏՊՔ-ն, որպես տարածաշրջանային քոլեջ, ունի տարբերակված ՄԿԾ-ներ՝ իրականացնելով ՀՀ տնտեսության տարբեր ոլորտները ներառող 11 կրթական ծրագիր: Հարկ է նշել, որ Քոլեջի կողմից իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին և համահունչ են Քոլեջի առաքելությանն ու անվանմանը: Դրանք են՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Սառնարանային տնտեսություն», «Դեղագործություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հաշվապահական հաշվառում», «Ատամնատեխնիկական գործ», «Խոհարարական գործ», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»: Վերջին 2-ը նախնական մասնագիտական կրթական ծրագրեր են:

ՌԾ-ով սահմանված են թվով 5 ռազմավարական նպատակ, 15 խնդիր, յուրաքանչյուր խնդրի համար առանձնացված են անհրաժեշտ քայլերն ու առաջընթացի գնահատման ցուցիչները: Քոլեջի ռազմավարական նպատակներն են՝ կրթության որակի բարձրացման շարունակական ամրապնդումը, արդյունավետ կադրային քաղաքականությունը, արդյունավետ և արդիականցվող ենթակառուցվածքները, ընդունելության քաղաքականության կայուն արժեքները և հուսալի վարկանիշի ձևավորումը, դրամական միջոցների հոսքերի արդյունավետ վերահսկողությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում իրականացվող կրթական գործընթացներն ընդհանուր առմամբ բխում են վերոնշյալ նպատակներից և դրանց համապատշաճ խնդիրներից: Առաջընթացի գնահատման ցուցիչները համընկնում են Քոլեջում կատարվող գործընթացներին: Քոլեջի ձևակերպած առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ի 4-րդ, 5-րդ մակարդակին: ՌԾ-ն ներառում է SWOT վերլուծություն, ուր առանձնացված ուժեղ և թույլ կողմերն ամբողջության մեջ արտացոլում են Քոլեջի ձեռքբերումներն ու բարելավման միտումները:

ԱՏՊՔ-ի ներքին և արտաքին շահակիցների ներգրավման և նրանց առջև հաշվետվողականության, թափանցիկության ապահովման քաղաքականությամբ առանձնացված

են արտաքին և ներքին շահակիցները, սահմանված են սկզբունքներն ու մոտեցումները, որոնցով Քոլեջը ներգրավում է շահակիցներ և բացահայտում է նրանց կարիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքները բացահայտվում են որոշակի պարբերականություն ապահովող հարցումների, դասալսումների, կլոր-սեղան քննարկումների, կիսամյակը մեկ անգամ կազմակերպվող բաց հանդիպումների միջոցով: Քոլեջը ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիք է դիտարկում նաև նրանց ընդգրկվածությունը խորհուրդներում, հանձնաժողովներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները, ներգրավված լինելով տարբեր խորհուրդներում, հանձնաժողովներում, գործուն մասնակցություն չեն ունեցել ՌԾ-ի մշակման, նպատակադրումների և առաջընթացի գնահատման ցուցիչների սահմանման գործում:

Ըստ սահմանված քաղաքականության և Քոլեջում իրականացվող գործընթացների՝ բոլոր շահակիցների կարիքները և սպասումները Քոլեջի գործունեության վերբերյալ հանդիսանում են մուտքային տվյալներ՝ ռազմավարական և ուսումնական գործընթացների պլանավորման համար: Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների՝ վերհանված որոշ կրթական կարիքներ արդեն-իսկ ներառված են ուսումնական գործընթացում, սակայն ոչ ամբողջությամբ են կատարված:

ԱՏՊՔ-ն ունի 2019-2023թթ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց, ուր առանձնացված են գործողությունները, ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսները (մարդկային, նյութական, ֆինանսական, տեղեկատվական), ակնկալվող արդյունքները: Բացի նշյալ պլան-ժամանակցույցը, առկա է նաև ըստ տարիների ՌԾ-ի իրականացման տարեկան պլան-ժամանակացույց և պլան-ժամանակացույցի կատարողական: Փորձագիտական խումբը դիտարկել է 2019թ., 2020թ. և 2021թ. պլան-ժամանակացույցները և դրանց կատարողականները: Եթե պլան-ժամանակցույցները ներառում են գործողությունները, պատասխանատուներին, անհրաժեշտ ռեսուրսները և ակնկալվող արդյունքները, ապա պլան-ժամանակացույցների կատարողականներում առանձնացված են գործողությունները, դրանց կատարողները, օգտագործված ռեսուրսները (ընդ որում՝ ինչպես մարդկային և նյութական ռեսուրսները, այնպես էլ՝ ֆինանսական և տեղեկատվական) և կատարողականը: Կատարողականներն ամբողջությամբ արտահայտում են պլան-ժամանակցույցներով պլանավորված ակնկալվող արդյունքները և ՌԾ-ի նպատակադրումները: Կատարողականներում նշված են նաև չիրականացված որոշ գործողություններն ու դրանց պատճառները: Չիրականացված գործողություններն ընդգրկված են հաջորդ տարվա ՌԾ-ի պլան-ժամանակացույցում: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ, ըստ պլանավորված և իրականացված գործողությունների, սահմանված և իրականացված ժամանակացույցի, սահմանված պատասխանատուների և կատարողների, նախատեսված անհրաժեշտ ռեսուրսների և օգտագործված ռեսուրսների, ակնկալվող արդյունքների և ձեռքբերված արդյունքների՝ ապահովված է համապատասխանությունը ՌԾ-ի, ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցի, ՌԾ-ի իրականացման տարեկան պլան-ժամանակացույցների և ՌԾ-ի իրականացման տարեկան պլան-ժամանակացույցների կատարողականների միջև: Ակնառու է՝ թիրախային և արդյունքային ցուցիչները ներդաշնակ են:

Քոլեջն իրականացնում է գործունեության ներքին գնահատում յուրաքանչյուր ուստարվա համար (կատարված ներքին գնահատումների արդյունքները տարեցտարի բարելավվել են), ուր առկա են քոլեջի ողջ կրթական գործունեությանը վերաբերող վերլուծություններ, գնահատումներ, եզրակացություններ և բարելավման մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ն ունի քոլեջի գործունեության բովանդակությունն արտահայտող հստակ և ըմբռնելի առաքելություն՝ ապահովելով տարածաշրջանում միջին և նախնական մասնագիտական կրթությամբ տնտեսության տարբեր ոլորտները սպասարկող մասնագետների պատրաստումը: Գովելի է, որ, որպես տարածաշրջանային Քոլեջ, իրականացնելով տարբերակված ՄԿԾ-ներ՝ նպաստում է մարզի աշխատատեղերի սպասարկմանը: Դրական է, որ Քոլեջի ռազմավարական նպատակներն իրագործելիության տեսանկյունից իրատեսական են և դրված են իրականացվող կրթական գործընթացների հիմքում: Ակներև է Քոլեջի առաքելության և սահմանված նպատակների ու խնդիրների միջև առկա համամասնությունը՝ դրականորեն անդրադառնալով Քոլեջի գործունեության արդյունավետության վրա: Դրական է, որ ՌԾ-ում կատարված SWOT վերլուծությունն արտահայտում է Քոլեջի առկա վիճակը՝ նպաստելով առկա ձեռքբերումների ու բարելավման ենթական խնդիրների թիրախավորմանը:

Գովելի է, որ Քոլեջը սահմանել է սկզբունքներ ու մոտեցումներ, որոնցով ներգրավում է շահակիցներին և բացահայտում նրանց կարիքները: Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ Քոլեջի գործունեության վերբերյալ շահակիցների կարիքները և սպասումները յուրօրինակ մուտքային տվյալներ են՝ կառավարչական և ուսումնական գործընթացները պլանավորելու համար: Արդյունքում քոլեջի համար ճանաչելի են դառնում շահակիցների կրթական կարիքները՝ նպաստելով դրանց արդյունավետ տեղորոշմանը:

Փորձագիտական խումբն արժևորում է, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմներ Քոլեջում դիտարկվում են պարբերաբար իրականացվող հարցումները, տարեկան ներքին գնահատումները, դասալսումները, կլոր-սեղան քննարկումները, բաց հանդիպումները, ինչպես նաև շահակիցների ընդգրկվածությունը խորհուրդներում, հանձնաժողովներում: Զուգահեռաբար՝ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ներքին և արտաքին շահակիցները, ներգրավված լինելով տարբեր խորհուրդներում, հանձնաժողովներում, գործուն մասնակցություն չունեն ՌԾ-ի մշակման, նպատակադրումների և առաջընթացի գնահատման ցուցիչների ձևակերպման գործում: Արդյունքում, նշյալի համատեքստում կարող է վտանգվել ՌԾ-ի արդյունվետությունը:

Դրական է գնահատվում, որ ԱՏՊՔ-ն ունի 2019-2023թթ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց՝ իր գործողություններով, ժամանակցույցով, պատասխանատուներով և անհրաժեշտ մարդկային, նյութական, ֆինանսական, տեղեկատվական ռեսուրսներով, ինչը նպաստում է ակնկալվող արդյունքների կանխորոշմանը: Բացի նշյալը, առկա է նաև ըստ տարիների ՌԾ-ի իրականացման տարեկան պլան-ժամանակացույց և պլան-ժամանակացույցի կատարողական, որոնց համադրության արդյունքում փորձագիտական խումբը ներկայացնում է իր ամփոփումն առ այն, որ կատարողականներն ամբողջությամբ արտահայտում են պլան-ժամանակցույցներով պլանավորված ակնկալվող արդյունքները և ՌԾ-ի նպատակադրումները, կատարողականներով նշված չիրականացված գործողություններն ընդհանուր առմամբ ընդգրկված

են հաջորդ տարվա ՌԾ-ի պլան-ժամանակացույցում: Հատկանաշական է, որ ապահովված է համապատասխանությունը պլանավորված և իրականացված գործողությունների, սահմանված և իրականացված ժամանակացույցի, սահմանված պատասխանատուների և կատարողների, նախատեսված անհրաժեշտ ռեսուրսների և օգտագործված ռեսուրսների, ակնկալվող արդյունքների և ձեռքբերված արդյունքների միջև՝ խոշոր հաշվով փաստելով թիրախային և արդյունքային ցուցիչների ներդաշնակության մասին: Վերոշարադրյալը փաստում է պլանավորված և իրագործված նպատակների գնահատված արդյունքերի առկայության մասին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի ծավալած գործունեությունը համարժեք է սահմանված առաքելությանը, ձևակերպած նպատակադրումներին, համահունչ է Որակավորումների ազգային շրջանակին, տարբերակված ՄԿԾ-ները նպաստում են տարածաշրջանի աշխատատեղերի սպասարկմանը, Քոլեջի նպատակներն ու խնդիրներն ամբողջությամբ արտացոլում են շահակիցների կարիքները, առկա են Քոլեջի առաքելության և գործունեության իրականացման արդյունքների գնահատման մեխանիզմները, ներդաշնակ են թիրախային և արդյունքային ցուցիչները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Ըստ Քոլեջի կանոնադրության՝ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության, լիազորված մարմինը՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ն, Քոլեջի կառավարման խորհուրդը, Քոլեջի գործադիր մարմինը՝ տնօրենը: Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, Քոլեջի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Կազմակերպական կառուցվածքով Քոլեջի կառավարման մարմիններն են՝ կառավարման խորհուրդը, տնօրինական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ուսումնամեթոդական խորհուրդը: Քոլեջում գործում է նաև ուսանողական խորհուրդը: ԱՏՊՔ-ի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է, որի ընթացքում ձևավորված շահույթը հիմնադրի սահմանած կարգով օգտագործվում է Քոլեջի կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Քոլեջի կառավարման խորհուրդն ունի լիազորված մարմնի կողմից հաստատված նոր կազմ (18.07.2022թ.)։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կառավարման խորհրդի նոր կազմով 4 նիստ է կազմակերպվել։ Խորհրդի նախագահը և անդամները, հաշվի առնելով տարածաշրջանային զարգացման առանձնահատկությունները, աշխատաշուկայի զարգացման տենդեցները, Քոլեջի հետագա զարգացմանը միտված հստակ դիրքորոշում ունեն, մասնավորապես՝ ներդնել գյուղատնտեսության ոլորտի ՄԿԾ-ներ, նոր կարճաժամկետ դասընթացների ծրագրեր, կարճ ցիկլով մասնագետներ պատրաստել, ֆինանսավորման նոր բանաձևեր աշխատեցնել, ամրապնդել գործընկերային համագործակցությունները։

Քոլեջում կառավարչական գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթային հենքով, և Քոլեջի տնօրենն իրականացնում է Քոլեջի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և Քոլեջի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում։ Տնօրենն իր կատարած աշխատանքների տարեկան հաշվետվությունը ներկայացնում է կառավարման խորհրդի քննարկմանը։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի տարեկան հաշվետվություններն ընդհանուր առմամբ բխում են տնօրենի տարեկան աշխատանքային պլաններից, ամփոփում են ՌԾ-ի պլան-ժամանակացույցների կատարողականների արդյունքները։ Դրանք ներառում են կրթական ծրագրերի և մասնագիտությունների, ընդունելության արդյունքների, աշխատողների և սովորողների, համագործակցությունների, ֆինանսական գործունեության վերաբերյալ քանակական և որակական վերլուծություններ, որոշ ամփոփումներ։ 2021թ. տնօրենի տարեկան հաշվետվությունում առանձնացված են նաև լուծման կարիք ունեցող խնդիրները, որոնք ընդհանուր կետերով ներդրվել են 2022թ. տնօրենի աշխատանքային պլանում։ Դրանք են՝ լսարանները համակարգիչներով և ժամանակակից սարքավորումներով վերազինումը, դասախոսների և տնօրենի տեղակալների վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը, նոր գործընկերների հետ համագործակցությունների շրջանակի ընդլայնումը, նոր գույքի (սեղան, աթոռ) ձեռքբերումը, այլընտրանքային ֆինանսական միջոցների ստեղծումը և այլն։

ԱՏՊՔ-ն աշխատում է պետական ֆինանսավորմամբ և ունի արտաբյուջե։ 2021թ. տվյալներով բյուջետային մուտքերը (դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտներ) կազմել են ընդամենը գործառնական եկամուտների 86,3%-ը, արտաբյուջետային մուտքերը՝ 13,7%-ը։ Արտաբյուջետային մուտքերի գերակշիռ մասը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, մուտքեր են առկա նաև վարձակալական վճարներից, վճարովի կարճաժամկետ դասընթացներից, որոնք էական կշիռ չունեն արտաբյուջետային մուտքերի կառուցվածքում։ 2020թ. համեմատ՝ 2021թ. ուսանողների վարձավճարներից մուտքերն ավելացել են շուրջ 80%-ով՝ ի հաշիվ վճարովի սովորող ուսանողների թվաքանակի ավելացման։ 2021թ. տվյալներով Քոլեջի գործառնական ծախսերն ունեն հետևյալ կառուցվածքը՝ աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարներ՝ 84%, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսեր՝ 6,4 %, կրթաթոշակներ՝ 8,6 %, այլ ծախսեր՝ 1%։ Քոլեջը փորձագիտական խմբի ուսումնասիրությանն է ներկայացրել 2021թ. բյուջեի պլանավորմանը կցված աշխատավարձի հետ առնչություն չունեցող ծախսերի մասով անհրաժեշտ նկարագրությունների թվային տվյալները։ 14 խումբ ծախսային նկարագրություններից հարկ է առանձնացնել՝ պրակտիկաների, էքսպոների կազմակերպման ծախսերը, ատամնատեխնիկների,

դեղագործների, հագուստի մոդելավորողների, խոհարարների լաբորատոր նյութերի և մասնագիտական սարքավորումների ծախսերը, դիմահարդարման, մատնահարդարման ուսումնական նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի համարժեք ծախսերը: Դրանք կազմում են աշխատավարձի ֆոնդի փոխհատումից և կրթաթոշակների վճարումից հետո ազատված դրամական միջոցների շուրջ 24%-ը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ բոլոր մասնագիտությունների լաբորատորիաները հագեցած են անհրաժեշտ ուսումնական նյութերով, մասնագիտական սարքավորումներով, և Քոլեջի տրամադրած ուսումնական նյութերը բավարարում են ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ աշխատավարձի ֆոնդը փոխհատուցելուց հետո Քոլեջի դրամական միջոցները հիմնականում ուղղվում են ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերմանը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Քոլեջի աշխատակիցներին տրամադրվող լրավճարների տարբերակման սկզբունքները հստակ չեն:

Քոլեջի կանոնադրությամբ և համապատասխան ընթացակարգերով դասախոսներն ու ուսանողները ներգրավված են տարբեր խորհուրդներում, հանձնաժողովներում՝ հնարավորություն ունենալով մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը: Փորձագիտական այցից պարզվեց, որ դասախոսների և ուսանողների կողմից վերհանված կարիքների հիման վրա կայացված որոշումները սակավ են, և նախորդ կառավարման խորհրդում դասախոսների, ուսանողների նախաձեռնությամբ խնդիրներ չեն քննարկվել: Վերջիններս իրենց առնչվող խնդիրների վերհանման, քննարկման և հնարավոր լուծումների առաջադրման նախաձեռնողականություն ցուցաբերելու տեսանկյունից պասիվ են:

ԱՏՊՔ-ում, որպես երկարաժամկետ պլանավորում, մշակվել և գործարկվում է 2019-2023թթ. ՌԾ-ն, որով նախանշված են Քոլեջի ռազմավարական նպատակները, խնդիրները, անհրաժեշտ գործողություններն ու առաջընթացի գնահատման թիրախային ցուցիչները: ՌԾ-ն ամփոփվում է SWOT վերլուծությամբ, ուր ներկայացված ուժեղ և թույլ կողմերը ներառված են Քոլեջի 2019-2023թթ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցում՝ որպես ուժեղ կողմերի գեներացման և թույլ կողմերի հաղթահարման համապարփակ գործողություններ: 2019-2023թթ. ՌԾ-ի պլան-ժամանակցույցով առանձնացված են յուրաքանչյուր խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողությունները, պատասխանատուները, ռեսուրսները և ակնկալվող արդյունքները: 2019-2023թթ. պլան-ժամանակացույցի կատարման արդյունավետությունը փորձագիտական խմբի կողմից գնահատվում է Քոլեջի կարճաժամկետ ծրագրերի՝ ըստ առանձին տարիների ՌԾ-ի պլան-ժամանակացույցների և դրանց կատարողականների արդյունքներով: Հարկ է նշել, որ գործառնական պլանավորման մեխանիզմները հստակ են, մասնավորաբար՝ ըստ առանձին տարիների ՌԾ-ի պլան-ժամանակցույցները բխում են 2019-2023թթ. ՌԾ-ի պլան-ժամանակացույցից, ըստ առանձին տարիների ՌԾ-ի պլան-ժամանակացույցներով սահմանված ակնկալվող արդյունքները, որպես ՌԾ-ի թիրախային ցուցիչներ, հիմնական մասով համարժեք են ՌԾ-ի պլան-ժամանակացույցների կատարողականներով ձեռքբերված ՌԾ-ի արդյունքային ցուցիչներին: 2019-2023թթ. ՌԾ-ի պլան-ժամանակցույցով նախատեսված արդյունքների ձեռքբերման հաջորդականությունը համապատասխանում է ըստ առանձին տարիների ՌԾ-ի պլան-ժամանակացույցներով ծրագրված գործողությունների իրականացմանը:

Քոլեջի բոլոր ստորաբաժանումներն ունեն աշխատանքային պլաններ, ներկայացնում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք քննարկվում են Քոլեջի մանկավարժական խորհրդում: Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ ստորաբաժանումների հաշվետվությունները չեն ամփոփում աշխատանքային պլանների կատարողականների արդյունքները, դրանք հիմնականում քանակական վերլուծություններ են, բացակայում է որակական վերլուծության բաղադրիչը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջը պլանավորում է սահմանել հաշվետվությունների ներկայացման հատուկ ձևաչափ՝ ներդնելով աշխատանքային պլանների հետ համադրելիության բաղադրիչը: Ինչ վերաբերում է տնօրենի տարեկան աշխատանքային պլաններին, ապա դրանք սահմանված գործողություններ են՝ աշխատանքի բովանդակությամբ, համապատասխան ժամանակցույցով և պատասխանատուների նախանշմամբ: ԱՏՊՔ-ի 2022թ. տնօրենի տարեկան աշխատանքային պլանում ներառված պլանային գործընթացների և 2021թ. ՌԾ-ի պլան-ժամանակացույցի կատարողականի արդյունքների միջև կապն առկա է, սակայն տեսանելի չէ նախորդ ուստարվա արդյունքների գնահատման հիմքով բարելավումների իրականացման տարեկան ծրագրային առաջնահերթությունների հստակ հաջորդականությունը և կատարողականի հաշվետվություններով դուրս բերված խնդիրների համարժեք լուծումները հաջորդ տարվա պլանների մեջ ներառելու, գործարկելու մեխանիզմները:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումներն ապահովում են որոշակի պարբերականություն, այդ հարցումների վերլուծությունների արդյունքներով վեր են հանվել առանցքային խնդիրներ, որոնք Քոլեջի գործունեության ռիսկերի կառավարման տեսանկյունից թիրախային են և հիմնարար լուծումներ պահանջող, օրինակ՝ այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների նկատմամբ կարիքը, նվազ գործընկերային համագործակցությունները, հետազոտական բաղադրիչի ներդրման անհրաժեշտությունը, գնահատման համակարգի բարելավման անհրաժեշտությունը, որոշ ՄԿԾ-ների շրջանավարտների գործնական հմտությունների, կիրառական ծրագրերի անբավարարությունը, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի համար համակարգչային ռեսուրսների սակավությունը, պրակտիկաների կազմակերպման բարելավման անհրաժեշտությունը: Բացի այդ, իրականացվում են տարբեր հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, կիսամյակը մեկ անգամ տնօրենի, ՈԱ պատասխանատուի և կազամակերպադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի մասնակցությամբ բաց հանդիպումներ Քոլեջի շահակիցների հետ (ուսանողներ, շրջանավարտներ, ծնողներ, գործատուներ), որոնք միտված են Քոլեջի կրթական գործընթացի հետ կապված հնարավոր ներքին և արտաքին ռիսկերի բացահայտմանն ու կանխարգելմանը, ինչպես նաև դրական փորձի վերհանմանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջում կրթական գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կառավարման մեխանիզմները և դրանց գործարկման ընթացակարգերը պլանավորման և կատարման տեսանկյունից կատարելագործման անհրաժեշտություն ունեն:

Փաստաթղթերի ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում իրականացվող գործընթացները ներառում են պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում փուլերը: Հարկ է ավելացնել, որ իրականացված բարելավումների

արդյունքները գնահատված չեն։ Առկա են գնահատման արդյունքում դուրսբերված առանցքային խնդիրները, որոշակիացվել են այդ խնդիրների համարժեք լուծումները, որոշ դեպքերում դրանք արդեն-իսկ իրագործվել են, սակայն այդ լուծումները բարելավումների տեսքով հաջորդ տարվա ծրագրային փաստաթղթերում ներառելու մեխանիզմները պարզորոշ չեն։ Յուրաքանչյուր ուստարվա կտրվածքով իրականացվող քոլեջի ներքին գնահատումով ևս առանձնացվում են կրթական գործընթացների բարելավման քայլերը։ Փորձագիտական խումբը 2020-2021 ուստարվա գործունեության ներքին գնահատման արդյունքներով առանձնացնում է հետևյալ բարելավման քայլերը՝ Քոլեջը հագեցնել նոր մասնագիտական ռեսուրսներով, ընդլայնել գործատուների և գործատու-դասախոսների շրջանակը, հաշվետվությունները դարձնել վերլուծական բնույթի, նպաստել մասնագիտական, օտար լեզվի և ՏՀՏ գործիքների տիրապետման վերապատրաստումների կազմակերպմանը, վերանորոգել համակարգիչները, ամբիոնների վարիչների կողմից իրականացնել վերահսկողություն քննական տոմսերի բովանդակության նկատմամբ, յուրաքանչյուր առարկայի/մոդուլի համար սահմանել գնահատման ձևաչափ և այլն։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նշյալ քայլերի զգալի մասը նախ՝ ներառվել են 2022թ. տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլաններում, ապա՝ կատարվել են կամ կատարման փուլում են։

Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման և պարբերաբար վերանայման ընթացակարգ ներդրված չէ, սակայն պարբերաբար իրականացվող թիրախային հարցումների, թեմատիկ քննարկումների, բաց հանդիպումների, ուսանող- դասախոս անհատական զրույցների միջոցով դուրս են բերվում ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը։ Այդ տեղեկատվությունը վերլուծվում է և վերլուծությունների փաթեթը Քոլեջում ամփոփվում է ՈԱ կառույցի միջոցով։ Փորձագիտական խումբը նշում է, որ նշյալ գործողությունները ծրագրված իրականացնելու պարագայում կարող են թիրախավորվել Քոլեջի գործունեության արդյունավետության գնահատման արդյունքները։

ԱՏՊՔ-ն իր պաշտոնական կայքէջի, Ֆեյսբուքյան էջի, Ինստագրամյան էջի, գովազդային բուկլետների միջոցով հրապարակային է դարձնում տեղեկատվությունը կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ։ Հարկ է նշել, որ տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ ներդրված չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ, որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն, ԱՏՊՔ-ն իր գործունեության ընթացքում ձևավորված շահույթն օգտագործում է Քոլեջի կանոնադրությամբ և ՌԾ-ով նախատեսված նպատակների իրականացման համար։ Դրական է դիտվում, որ կառավարման խորհրդի նոր կազմի դիտարկումների հիմքում ընկած են տարածաշրջանային զարգացման առանձնահատկություններն ու աշխատաշուկայի զարգացման տենդեցները, ինչը կարող է էապես ազդել Քոլեջի վարկանիշի բարձրացման և իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների քանակի ավելացման վրա։

Դրական է, որ Քոլեջի կառավարչական գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթային հենքով, տնօրենն իր ընթացիկ գործունեության արդյունքները ներկայացնում է ՌԾ-ի պլան-ժամանակացույցների կատարողականների արդյունքներն ամփոփող և վերլուծություններ պարունակող տարեկան հաշվետվությունների տեսքով, ուր առանձնացված են

նաև լուծման կարիք ունեցող խնդիրները՝ նպաստելով քոլեջի գործունեության արդյունավետության գնահատմանն ու ընդգծված խնդիրներն առաջիկա պլանավորումներում ներդրմանը։

Եթե ԱՏՊՔ-ի բյուջետային մուտքերը կազմում են ընդամենը գործառնական եկամուտների զգալի մասը՝ շուրջ 86,3%-ը, ապա արտաբյուջետային մուտքերը՝ 13,7%-ի չափով հիմնականում ձևավորվում են ուսանողների վարձավճարներից։ Նշյալի կոնտեքստում դրական արձանագրում է, որ 2021թ.-ին նախորդ տարվա համեմատ վճարովի սովորող ուսանողների քանակի ավելացման հաշվին գործառնական եկամուտներն ավելացել են։ Ինչ վերաբերում է Քոլեջի ծախսային հոդվածներին, ապա դրանց զգալի մասն ուղղվում են ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը, դրան զուգահեռ՝ աշխատավարձի ֆոնդի փոխհատումից և կրթաթոշակների վճարումից հետո ազատված դրամական միջոցների՝ շուրջ 24%-ի չափով Քոլեջն ուղղում է պրակտիկաների կազմակերպմանը, լաբորատոր նյութերի և մասնագիտական սարքավորումների ձեռքբերմանը, ուսումնական նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերմանը՝ նպաստելով ՄԿԾ-ների առավել արդյունավետ իրականացմանը։ Գովարժան է, որ Քոլեջի բյուջետային և արտաբյուջետային միջոցների բաշխումն ընդհանուր առմամբ համահունչ է ՌԾ-ով սահմանված առաջնահերթություններին, սակայն մտահոգիչ է, որ Քոլեջի աշխատակիցներին տրամադրվող լրավճարների տարբերակման մեխանիզմները հստակ չեն՝ այդ կոնտեքստում խոչընդոտելով ֆինանսական ռեսուրսների բաշխման նպատակների հիմնավորմանը։

Չնայած որ, քոլեջի դասախոսներն ու ուսանողները ներգրավված են տարբեր խորհուրդներում, հանձնաժողովներում՝ հնարավորություն ունենալով մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, այդուհանդերձ, դասախոսներն ու ուսանողները իրենց առնչվող խնդիրների վերհանման և քննարկման նախաձեռնողականությամբ պասիվ են, ինչը չի նպաստում ներքին շահակիցների գործուն մասնակցությանը Քոլեջի կառավարման գործընթացներին։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում մշակվել և գործողության մեջ են կարճաժամկետ և երկարաժամկետ պլանները, նախանշված են առաջընթացի գնահատման թիրախային ցուցիչները, որոնք ընդհանրության մեջ համընկնում են ձեռքբերված արդյունքային ցուցիչներին, ըստ տարիների պլան-ժամանակացույցներն ու դրանց կատարողականները ծրագրված գործողությունների և միջոցառումների իրականացման հաջորդականությամբ ևս համընկնում են՝ ապահովելով գործառնական կառավարման գործիքների արդյունավետ գործարկումը։ Միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ ստորաբաժանումների հաշվետվությունները չեն ամփոփում աշխատանքային պլանների կատարողականների արդյունքները, լինելով հիմնականում քանակական վերլուծություններ՝ չեն նպաստում բովանդակային խնդիրների ձևակերպմանը։ Արդյունքում կարող է տուժել պլան-կատարողական գործընթացի արդյունավետությունը։ Գովելի է, որ տնօրենի տարեկան աշխատանքային պլանը սահմանված գործողությունների համախումբ է՝ աշխատանքի բովանդակությամբ, հստակ ժամանակացույցով և պատասխանատուներով, սակայն, միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ 2022թ. աշխատանքային պլանում ներառված պլանային գործընթացների և 2021թ. ՌԾ-ի պլան-ժամանակացույցի կատարողականի արդյունքների միջև հաջորդական կապն արտահայտված չէ, և հստակ չեն բարելավումները հաջորդ տարվա պլանների մեջ ներառելու և գործարկելու մեխանիզմները։ Նշյալը կարող է խոչընդոտել բարելավումների իրականացման տարեկան

ծրագրային առաջնահերթությունների հաջորդական սահմանմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը վեր է հանել առկա խնդիրը՝ պլանավորելով ներդնել հաշվետվությունների ներկայացման հատուկ ձևաչափ, ուր կներդրվի աշխատանքային պլանների հետ համադրելիության բաղադրիչը՝ առաջիկայում նպաստելով վերհանված խնդիրներ-բարելավումներ ցիկլի արդյունավետ իրականացմանը:

Գովելի է, որ Քոլեջում յուրաքանչյուր տարի իրականացվում է ներքին գնահատում, կազմակերպվում են ներքին և արտաքին շահակիցների կանոնաբար հարցումներ, որոնց վերլուծությունների արդյունքները նպաստում են Քոլեջի գործունեության ռիսկերի կառավարման տեսանկյունից թիրախային և հիմնարար լուծումներ պահանջող առանցքային խնդիրների վերհանմանը: Քոլեջի շահակիցների հետ կազմակերպվող տարբեր հանդիպումների, թեմատիկ քննարկումների, կլոր-սեղան քննարկումների, բաց հանդիպումների ընթացքում ևս դուրս են բերվում առկա հաջողված փորձերն ու խնդիրները՝ օժանդակելով Քոլեջի կրթական գործընթացի հետ կապված ներքին և արտաքին ռիսկերի արդյունավետ կառավարմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը, կիրառելով գործունեության գնահատման, մշտադիտարկման տարբեր մեխանիզմներ, ինքնուրույնաբար վեր է հանել այն կրթական խնդիրները, որոնք համակողմանի վերլուծության և լիարժեք լուծումների կարիք ունեն: Հաշվի առնելով, որ Քոլեջն ունի կրթական գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կառավարման մեխանիզմների և, միևնույն ժամանակ, դրանց գործարկման ընթացակարգերի կատարելագործման կարիք, փորձագիտական խումբը նշում է՝ տվյալ հարցի շրջանակում ԱՏՊՔ-ն ցուցաբերում է պատասխանատու և կայուն վարքագիծ՝ հաշվի առնելով երկրում առկա իրողություններն ու մարտահրավերները:

Գովարժան է Քոլեջի պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, ինստագրամյան էջի, գովազդային բուկլետների միջոցով կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնացումը, ինչը դրականորեն է անդրադառնում Քոլեջի վարկանիշի վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ ԱՏՊՔ-ի կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց, առկա է ռազմավարական կառավարման արդյունավետ գործիքակազմ, ՌԾ-ով սահմանված թիրախային ցուցիչներն ու արդյունքային ցուցիչները պլանավորում և կատարողական կապի մեջ համընկնում են, գործում են գործունեության արդյունավետության գնահատման, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մշտադիտարման մեխանիզմները, վերհանված են գործառնական կառավարման խնդիրները, կառավարչական գործընթացներն իրականացվում են որակի շրջափուլի սկզբունքով, ֆինանսների բաշխման մոտեցումներն ընդհանուր առմամբ միտված են ՄԿԾ-ների արդյունավետ իրականացմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Կանոնադրության համաձայն՝ ԱՏՊՔ-ն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում: Քոլեջում իրականացվում են 9 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սառնարանային տնտեսություն», «Դեղագործություն», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Ատամնատեխնիկական գործ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»: Նշված կրթական ծրագրերն իրականացվում են առկա ուսուցմամբ՝ վճարովի և անվճար հիմունքներով: ԱՏՊՔ-ն նաև իրականացնում է 2 մասնագիտություններով նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրեր: Քոլեջի «Մեղվաբուծություն» ՄԿԾ-ում վերջին տարիներին դիմորդներ չեն եղել:

Համաձայն ԱՏՊՔ ՌԾ-ի՝ Քոլեջը ձգտում է ապահովել կրթության որակի բարձրացման շարունակականությունը՝ ապահովելով տարածաշրջանում միջին և նախնական մասնագիտական կրթությամբ՝ տնտեսության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստումը: Այցի ընթացքում պարզվեց, որ այդ նպատակով սահմանված են առաջընթացի և ընթացիկ գնահատման առանցքային ցուցիչներ:

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի № 752-Ն որոշման՝ քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները հնարավորություն ունեն բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու: Համաձայն ԱՏՊՔ անցկացրած հարցումների՝ 2019, 2020 և 2021թ.թ. շրջանավարտների 38,33%-ը կրթությունը շարունակում է բուհում, 21,71%-ը գործազուրկ են, 28,41%-ը չեն աշխատում իրենց մասնագիտությամբ և միայն 11,53%-ն է աշխատում իր մասնագիտությամբ: Շրջանավարտների 38,33%-ը Քոլեջը դիտարկում է որպես բուհում կրթությունը շարունակելու հնարավորություն:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կառավարման խորհրդի նոր կազմը դեռևս չի քննարկել ՄԿԾ-ների կառավարման հետ կապված խնդիրներ, սակայն կառավարման խորհրդի անդամները նախատեսում են առաջիկայում ԿԽ-ում որոշակի առաջարկություններով հանդես գալ, մասնավորապես՝ ներդնել գյուղատնտեսության ոլորտի ՄԿԾ-ներ, նոր կարճաժամկետ դասընթացների ծրագրեր, կարճ ցիկլով մասնագետներ պատրաստել:

2021-2022 ուսումնական տարում Քոլեջում ներդրվել է «Մասնագիտության կրթական ծրագրերի մասնագրերի լրացման» կարգը, սահմանվել են բոլոր ՄԿԾ-ների մասնագրերը, որը ՄԿԾ-ների նպատակների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների, բովանդակության և կառուցվածքի, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման ամփոփ նկարագրությունն է, այն քոլեջը դիտարկում է որպես տեղեկատվության աղբյուր քոլեջի արտաքին և ներքին շահակիցների

համար: Առաջիկայում Քոլեջը պլանավորում է սահմանել ՄԿԾ-ների մասնագրերի բնութագրիչները:

ՄԿԾ-ները և դրանցում ընդգրկված մոդուլային ծրագրերը մշակելիս Քոլեջն առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով: Հիմնականում իրականացվում է ՊԿՉ-ներով սահմանված պահանջների տեղայնացում և տեսական ու գործնական պարապմունքների ժամաքանակների համամասնությունների փոփոխություն: Ընտրովի առարկաների ծրագրերի մշակումն իրականացնում է համապատասխան ամբիոնը՝ հաշվի առնելով ներքին շահակիցների կարծիքը: Մասնավորապես «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններում դասախոսի նախաձեռնությամբ, որպես ընտրովի առարկա ներդրվել է «Մասնագիտական լատիներեն»-ը, որի նպատակն է ուսանողներին ծանոթացնել բժշկական տերմինոլոգիային: Հանրակրթական առարկաների ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերին համահունչ:

Դասախոսն ազատ է մեթոդի ընտրության հարցում՝ հաշվի առնելով թեմայի առանձնահատկությունը և նպատակը: Դասախոսի կողմից պլանավորված և իրականացվող ուսումնառության արդյունքներին համապատասխան ընտրված դասավանդման մեթոդները մանրամասն նկարագրվում են Քոլեջում 2020թ-ից ներդրված դասախոսի թղթապանակում /պորտֆոլիոներում/: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ դասախոսները կիրառում են դասը վարելու դասական ձևերը՝ դասախոսություններ ուսումնառության նյութի տրամադրմամբ, սեմինարներ, ինչպես նաև ցուցադրում են ժամանակակից մոտեցում՝ օգտագործելով Քոլեջում առկա նյութատեխնիկական բազան, որը հնարավորություն է տալիս ուսումնառության գործընթացում կիրառելու նորագույն մոտեցումներ, դասընթացը դարձնելու ավելի հետաքրքիր, մատուցվող նյութը՝ մատչելի, քննարկումների համար ավելի արդյունավետ:

ՄԿԾ-ների համար Քոլեջում առկա է ուսումնառության արդյունքների և մոդուլների քարտեզագրում: ԱՏՊՔ-ում աշխատանքներ են տարվում դասավանդման և ուսումնառության ավանդական մեթոդները վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու ուղղությամբ:

Փորձաքննությամբ պարզվեց, որ վերջնարդյունքներով պայմանավորված դասավանդման մեթոդների ընտրության միասնական չափանիշներ սահմանված չեն: Դասախոսներն իրենք են ընտրում այս կամ այն մոդուլի դասավանդման մեթոդը: Փորձագիտական այցի ընթացքում դասալսումների և տրվող հանձնարարականների ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսանողների տրվում են տարբեր հանձնարարականներ, սակայն դրանք հիմնականում գիտելիք ձևավորող են: Ինքնուրույն ուսումնասիրություն պահանջող, վերլուծական մտքի և հետազոտական կարողությունների զարգացմանն ու հմտությունների ձևավորմանը միտված առաջադրանքները ոչ բոլոր ՄԿԾ-ներում են առկա:

2021 թվականից ուսանողներին հանձնարարվում է կատարել կուրսային աշխատանքներ, սակայն կուրսային աշխատանքներին ներկայացվող պահանջները հստակեցված չեն: Կուրսային աշխատանքները հաճախ ռեֆերատիվ բնույթ են կրում: Կուրսային աշխատանքների ուսումնասիրությամբ պարզվեց՝ դրանք հիմնականում տարբեր աղբյուրներում առկա տվյալ թեմայի վերաբերյալ տեքստերի նույնական վերաշարադրանք են: Իսկ օգտագործված աղբյուրների հղումները ոչ միշտ են ակտիվ:

Համաձայն ՌԾ-ի՝ Քոլեջը ձգտում է դարձնել գնահատման համակարգը պատճառաբանված ու թափանցիկ՝ գործադրելով համապատասխան մեթոդական հենք՝ ուղղված ուսանողի վերջնարդյունքների անկանխակալ գնահատմանը: Քոլեջի կրթական ծրագրի շրջանակներում գործող ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատման համակարգը սահմանված է «Ուսանողների գիտելիքների, կարողությունների ստուգման, կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորման, պարտքերի մարման, ուսանողների կողմից բաց թողնված դասաժամերի վերականգնման և գնահատման արդյունքների բողոքարկման» ընթացակարգում: Բոլոր մասնագիտական կուրսերում գիտելիքների և կարողությունների ստուգումը կազմակերպվում և իրականացվում է կիսամյակի ընթացքում և կիսամյակի վերջում՝ գործող ուսումնական պլաններով սահմանված ժամանակահատվածներում, իսկ ուսումնառության ավարտին իրականցվում է պետական ամփոփիչ ստուգում: Ընթացիկ գնահատումներն իրականացվում են դասախոսի կողմից՝ դասապրոցեսի ընթացքում և գրանցվում են դասամատյանում, ստուգարքները և մոդուլի ամփոփումները իրականացվում են ժամանակացույցի համաձայն, արդյունքները արձանագրվում են քննական ամփոփագրերում: Յուրաքանչյուր ուսումնառության արդյունք գնահատվում է գնահատման թերթիկով, մոդուլների արդյունքների գնահատումները կատարվում են դասախոսի կողմից տրված գնահատման թերթիկներում, ուսումնառության գնահատման արդյունքում ընդունվում է որոշում. «անցել է» կամ «չի անցել»: Քննությանը (մոդուլի ամփոփում) դասավանդող դասախոսից բացի մասնակցում է նաև որակի ներքին ապահովման կենտրոնի ներկայացուցիչը՝ քննությունների կազմակերպչական աշխատանքները և ընթացքը գնահատելու նպատակով: Քննաշրջանի վերջում ՈՆԱԿ-ի ներկայացուցիչները ներկայացնում են իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, որոնց միջոցով վեր են հանվում առաջացած խնդիրները, պլանավորվում են բարելավման մեխանիզմները: Գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում ուսանողներն իրավունք ունեն բողոքարկելու ստացած գնահատականը՝ քննասենյակից դուրս չգալով: Քոլեջում գործող ընթացակարգի համաձայն տրվում են լրացուցիչ հարցեր նույն քննական տոմսի շրջանակում, ստացած գնահատականը համարվում է վերջնական: Կիսամյակի ընթացքում ուսանողներին հնարավորություն է տրվում երեք առարկայից /մոդուլից/ վերահանձնել ստուգարքը կամ քննությունը՝ գնահատականը բարձրացնելու նպատակով: Ուսանողները տեղեկացված են բողոքարկման և վերահանձման հետ կապված իրենց իրավունքներից, որոնցից նրանք սահմանված կարգով օգտվում են: 2021թ-ին Ուսումնամեթոդական խորհրդի նախաձեռնությամբ յուրաքանչյուր դասախոսի կողմից սահմանվել են ուսանողների ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ, որոնց մասին ուսանողները տեղեկանում են առարկան /մոդուլը/ ուսումնասիրելու սկզբում:

ԱՏՊՔ ուսանողների գնահատման քաղաքականությունն ամփոփված է «Ուսանողների գիտելիքների, կարողությունների ստուգման, կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորման, պարտքերի մարման, ուսանողների կողմից բաց թողնված դասաժամերի վերականգնման և գնահատման արդյունքների բողոքարկման» ընթացակարգում: Փորձաքննության ընթացքում նաև պարզվեց, որ քոլեջում ակադեմիական ազնվության խախտման դեպքեր չեն արձանագրվել: Հանդիպումների ընթացքում և փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ դարձավ, որ Քոլեջում կարևորվում է ստուգարքների և քննությունների ժամանակ ակադեմիական ազնվության խախտումների կանխարգելումը, սակայն ուսանողների ինքնուրույն

աշխատանքներում ակադեմիական ազնվության պահպանման խնդիրը ուշադրության չի արժանացել:

Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնները, ելնելով իրենց դասավանդած մոդուլների առանձնահատկություններից, ինքնուրույն են ընտրում գիտելիքի ստուգման եղանակը: Ըստ ինքնավերլուծության՝ կարողությունների գնահատումն իրականացնում են դասավանդողը, պրակտիկայի ղեկավարը, գործատուն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ գործատուն գնահատման գործընթացին մասնակցում է միայն պրակտիկայի օրագրում ուսանողի բնութագիրը գրելով: Պրակտիկայի գնահատումը կատարվում է պրակտիկայի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի օրագրի և հաշվետվության հիման վրա՝ հաշվի առնելով ուսանողի մասին պրակտիկայի վայրի համապատասխան բնութագիրը: Պրակտիկայի գնահատման չափանիշներ և գնահատականի ձևավորման առանձին բաղադրիչներ սահմանված չեն:

ԱՏՊՔ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է «Պետական ամփոփիչ ստուգման, կազմակերպման և անցկացման ընթացակարգ»-ի համաձայն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ պետական ավարտական ատեստավորման միակ ձևը քննությունն է, դիպլոմային աշխատանքներ նախատեսված չեն:

Քոլեջում կիրառվում է քննություններին ՈՆԱԿ ներկայացուցչի մասնակցության մեխանիզմը, որով Քոլեջը նպատակ ունի նպաստելու դասախոսների կողմից ուսանողների գնահատման գործընթացի օբյեկտիվության բարձրացմանը:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ բացի նախաավարտական պրակտիկաներից (առավելագույնը 6 շաբաթ տևողությամբ) այլ արտադրական պրակտիկաներ նախատեսված չեն: ԱՏՊՔ-ում հիմնականում իրականացվում են ուսումնական պրակտիկաներ: Նախաավարտական պրակտիկաները կազմակերպվում են մարզի տարբեր պետական և մասնավոր կազմակերպություններում, որոնք ապահովված են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով: Պարզվեց նաև, որ մարզում ՏՏ ոլորտի կազմակերպությունները սակավաթիվ են: Այդ պատճառով «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության բոլոր պրակտիկաները, այդ թվում՝ նաև արտադրական, կազմակերպվում են քոլեջում: Տվյալ մասնագիտության ուսանողներն իրական աշխատանքային միջավայրում գործնական հմտություններ ձևավորելու հնարավորություն չունեն, իսկ «Համակարգչային գեղարվեստական ձևավորում» մասնագիտության նմանատիպ պրակտիկաներն անցկացվում են ֆոտոստուդիայում, որը տվյալ մասնագիտության հետ քիչ առնչություն ունի:

Գործատուների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությամբ տարածաշրջանում ուղևորափոխադրումներով զբաղվող «Լիգա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը շահագրգռված է ԱՏՊՔ-ում այս մասնագիտության շարունակական լինելու գործընթացում, քանի որ նախընտրում է աշխատանքի վերցնել Քոլեջի շրջանավարտներին, առկա է բանավոր պայմանավորվածություն այս պահին պարդադիր զինվորական ծառայության մեջ գտնվող շրջանավարտներին վերադառնալուց հետո աշխատանքի ընդունելու համար:

Քոլեջում առկա է ավտոմոբիլների ներքին կառուցվածքի ուսումնասիրման, առանձին դետալների աշխատանքը նկարագրող, տեխնիկական սպասարկման համար նախատեսված

լաբորատոր սարքավորումներ, ուրն ուսանողները ձեռք են բերում իրենց գործնական հմտությունները։

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները փաստում են, որ ունեն հայերեն լեզվով գրականության պակաս, որը լրացնում են իրենց կողմից կատարվող թարգմանություններով և ինտերնետում առկա դիտակտիկ նյութերով։

«Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում պրակտիկաները կազմակերպվում են մարզպետարանում, մասնավոր հաշվապահական կազմակերպություններում։ Փորձագիտական այցի ընթացքում ուսանողներն իրենց գոհունակությունն արտահայտեցին կազմակերպված պրակտիկաներից։ Տվյալ ՄԿԾ-ի շրջանակում կատարված հարցումների արդյունքներով գործատուները նշել են ուսանողների գործնական հմտությունների և կիրառական ծրագրերի իմացության ոչ բավարար լինելու մասին։ Քոլեջը հաշվի առնելով գործատուների կարծիքը՝ ՄԿԾ-ում ներառել է ՀԾ հաշվապահ ծրագրի, Tax-Service հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի դասավանդումը։ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները դիպլոմային աշխատանքներ չեն գրում, սակայն հարկ է նշել, որ պետական ամփոփիչ ստուգման քննական տոմսերը ներառում են 4 հարց և 1 խնդիր, որոնք ընդհանրության մեջ կարող են հիմք հանդիսանալ գնահատելու մասնագիտական վերջնարդյունքները և փաստել որակավորումների արժանահավատ շնորհման մասին։ Կատարված կուրսային աշխատանքներում հաջորդական հարցերի տրամաբանական կապն արտահայտված չէ, չունեն եզրահանգումներ, ամփոփումներ, վերլուծություններ։ Օրինակ՝ «ՀՀ-ում գործող հարկերը» վերնագրով կուրսային աշխատանքում առանձնացված հարց է՝ «Հարկային համակարգի ձևավորման և զարգացման հիմնական ուղղությունները և գործող հարկային համակարգի ընթացակարգի նկարագիրը ՀՀ-ում և այլ երկրներում», որ առավել ծավալուն և ընդգրկուն հարց է, քան կուրսային աշխատանքի վերնագիրը։ Բացի նշյալը՝ վերլուծական տվյալներ չկան, միայն հարկային օրենսդրությանն է անդրադարձ կատարված, հավելվածով կցված է 2016թ. տվյալներ։ Կատարված ռեֆերատները տեղեկատվական, փաստագրական բնույթի աշխատանքներ են։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ մասնագիտության գծով առկա ուսումնառության նյութերը տրամադրված էին ուսանողներին, ուսումնական նյութերում կցված են հաշվապահական խնդիրներ, թեստեր և առաջադրանքներ, որոնք գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող են։ Փորձագիտական խմբի կողմից դիտարկվող «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի դասընթացների ընթացքում դասախոսներն ամփոփում էին նախորդ նյութը, կատարում կարճ հարցումներ, ուր բոլոր ուսնողները ներգրավված էին դասապրոցեսին, այնուհետև նոր նյութի բացատրումն ուղեկցվում էր նոր խնդիրների լուծմամբ։ Այս մասնագիտությունում, վերհանված կարիքի հիման վրա ներդրվել է մասնագիտական օտար լեզու առարկան։

Քոլեջում գործում է «Մշտադիտարկման անցկացման» կարգը, սակայն մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն դեռևս առկա չէ։ Քոլեջում իրականացվող մշտադիտարկումն ապահովում է կրթական գործընթացի որակը և ստեղծում գնահատման միջոցով այն շարունակաբար բարելավելու հնարավորություն։ Քոլեջը մշտադիտարկումներն օգտագործում է գործընթացները ՊԻԳԲ շրջափուլով իրականացնելու նպատակով։ Որպես ՄԿԾ-ների մշտադիտարկման և

գնահատման գործիք կիրառվում են ուսանողական հարցումները: Իրականացվում են ստացված կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ՝ ըստ մշակված համապատասխան հարցաթերթի: Այդ հարցաթերթը ներառում է ՄԿԾ-ից, ուսուցման մեթոդաբանությունից, պրակտիկայի արդյունքում ստացված կարողությունների և հմտությունների ձևավորումից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցեր: Հարցումներին մասնակցում են նաև գործատուները, շրջանավարտները, իսկ նախաավարտական պրակտիկայի ղեկավարը հնարավորություն ունի համապատասխան ձևաթղթում կատարելու առաջարկություններ՝ ՄԿԾ-ների բարելավման վերաբերյալ: Փորձագիտական ուսումնասիրությամբ պարզվեց, որ կրթական ծրագրերում սահմանված կարգով փոփոխություններ անելիս հաշվի են առնվում հարցումների արդյունքները, սակայն գործատուների շրջանում արված հարցումների ժամանակ բովանդակային առաջարկությունները և հարցումների արդյունքում ՄԿԾ-ներում արված փոփոխությունները մեծ թիվ չեն կազմում:

ՄԿԾ-ների մշտադիտարկման գործիք է նաև մասնագիտությունների պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները: Այդ հաշվետվություններում կարևորվում են կրթական ծրագրի իրականացման վերաբերյալ նրանց առաջարկությունները, որոնք հիմք են հանդիսանում դրանց հետագա բարելավման համար:

Վերջին տարիների ընթացքում ՄԿԾ-ներում կատարվել են վերանայումներ, որոնք միտված են եղել կրթական ծրագրի արդիականացմանը, աշխատաշուկայի պահանջներին համահունչ առանձին դասընթացներով համալրմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը՝ նպատակ ունենալով բարձրացնել դրանց նպատակայնությունն ու գրավչությունը:

Քոլեջը չունի ուսանողների և դասախոսների փոխանակումն ու շարժունությունն ապահովելու անմիջական համաձայնագրեր այլ ուսումնական հաստատությունների հետ: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ տարբեր ծրագրերի շրջանակներում եղել են հանդիպումներ ՀՀ այլ քոլեջների հետ, սակայն ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն, բենչմարքինգ չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ն, որպես տարածաշրջանային քոլեջ, իրականացնում է տարբերակված ՄԿԾ-ներ՝ նպաստելով տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը: Գովելի է, որ կրթության որակի բարձրացման շարունակականությունն ապահովելու նպատակով սահմանված են առաջընթացի և ընթացիկ գնահատման առանցքային ցուցիչներ, և փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականության մշակման և կիրառման պարագայում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և պարբերաբար վերանայման, կարիքների վերհանման գործընթացները կարող են իրականացվել ավելի արդյունավետ:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում նորանշանակ կառավարման խորհրդի անդամների նախաձեռնողական մոտեցումները նոր ՄԿԾ-ների մշակման հարցում և կարծում է, որ այդ մոտեցումները կնպաստեն ճիշտ գնահատելու Քոլեջի կարողությունները, ինչի արդյունքում Քոլեջում կներդրվեն տարածաշրջանի կարիքներին համապատասխան բավարար պահանջարկ վայելող նոր մասնագիտություններ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ 2021թ-ից քոլեջում ներդրված ՄԿԾ-ների մասնագրերը, որոնցում սահմանվել են ՄԿԾ-ների նպատակները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները, բովանդակությունը, կառուցվածքը, ընտրված դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները, կարող են հիմք ստեղծել վերջնարդյունքահենք ուսուցում իրականացնելու համար: Միաժամանակ փորձագիտական խումբը գնահատում է քոլեջում 2020թ-ից ներդրված դասախոսի թղթապանակի /պորտֆոլիո/ գաղափարը և կարծում է, որ ՄԿԾ-ների մասնագրերի հետ համադրության մեջ այն կարող է դրականորեն անդրադառնալ դասավանդման և ուսումնառության ավանդական մեթոդները վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտություններում դասախոսի նախաձեռնությամբ «Մասնագիտական լատիներեն» ընտրովի առարկայի ներդրումը: Այդ հաջողված փորձն այլ մասնագիտություններում տարեծելի դարձնելով՝ Քոլեջը կարող է նպաստել ՄԿԾ-ների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում գնահատման համակարգը պատճառաբանված ու թափանցիկ դարձնելուն միտված Քոլեջի գործադրած ջանքերը, որպես նպատակ ունենալով ուսանողների կարողունակության անկանխակալ գնահատմանը:

Փորձագիտական խումբը ուշադրության արժանի է համարում քննություններին կամ մոդուլների ամփոփմանը ՈՆԱԿ ներկայացուցչի մասնակցությունը, ինչը լրացուցիչ երաշխիքներ է ստեղծում գնահատման գործընթացի օբյեկտիվության և թափանցիկության ապահովման առումով, հատկապես այն պարագայում, երբ դրանք անցկացվում են համակարգված և ամփոփվում են համապատասխան հաշվետվության ներկայացմամբ:

Արժևորելով մասնագիտությունների պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, որպես ՄԿԾ-ների մշտադիտարկման գործիք, փորձագիտական խումբը կարծում է, որ ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման նպատակով տարբեր շահակիցների շրջանում անցկացվող հարցումների շրջանակի ընդլայնման և թիրախայնության միջոցով Քոլեջը կարող է բավարար հիմքեր ապահովել ՄԿԾ-ների գնահատման և բարելավման համար:

Փորձագիտական խումբը ողջունելի է համարում այն փաստը, որ ԱՏՊՔ-ում ներդրվել են կուրսային աշխատանքներ, ինչը կնպաստի ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական մտքի զարգացմանը, սակայն գտնում է, որ կուրսային աշխատանքներին ներկայացվող պահանջները հստակեցման կարիք ունեն, որպեսզի դրանք ռեֆերատիվ բնույթից վերածվեն վերլուծական աշխատանքների: Արդյունքում Քոլեջում կբարելավվի հետազոտական բաղադրիչը: Դրական է, որ Քոլեջում կարևորվում է ստուգարքների և քննությունների ժամանակ ակադեմիական ազնվության խախտումների կանխարգելումը, սակայն մտահոգիչ է, որ ակադեմիական ազնվության նորմերը չեն տարածվում ուսանողների ինքնուրույն աշխատանքների վրա:

Կարևորելով կուրսային աշխատանքների ներդրումը, փորձագիտական խումբն իր մտահոգությունն է արտահայտում, որ պետական ավարտական ատեստավորման միակ ձևը քննությունն է, դիպլոմային աշխատանքներ նախատեսված չեն: Փորձագիտական խումբը դրական

է գնահատում դիպլոմային աշխատանքների ներդրման քոլեջի նպատակադրումը, ինչն ուղղակիորեն կխթանի ՄԿԾ-ների հետազոտական բաղադրիչի զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում Քոլեջի ջանքերը՝ միտված ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը, սակայն մտահոգիչ է համարում, որ բացի նախաավարտական պրակտիկաներից, այլ արտադրական պրակտիկաներնախատեսված չեն: Արտադրական պրակտիկաները լավագույնս կարող են նպաստել իրական արտադրական միջավայրում պրակտիկ փորձի հիման վրա մասնաագիտական կարողությունների զարգացմանն ու հմտությունների ձևավորմանը:

Մտահոգիչ է, որ ԱՏՊՔ-ում վերլուծված չեն բենչմարքինգի և շարժունության ապահովման ասպարեզում քոլեջի հնարավորություններն ու հեռանկարները, մշակված չեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեին այլ ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման արդյունավետ աշխատանքներ իրականացնելուն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ վերջին շրջանում մշակվել և ներդրվել են կրթական գործընթացները գնահատող տարբեր մեխանիզմներ: Փորձագիտական խումբը նշում է, որ խորքային վերլուծությունների հիման վրա կատարված փոփոխությունները, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների լիարժեք կիրառումը, բովանդակային վերլուծությունների հիման վրա վերանայումների իրականացումը կարող են նպաստել Քոլեջի կրթական գործընթացների արդյունավետ իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին, Քոլեջի առաքելությանը, ՈԱՇ-ի նկարագրիչներին, կազմված են ըստ պետական կրթական չափորոշիչների, Քոլեջում առկա են գիտելիքի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, ակադեմիական ազնվության կարգ, ՄԿԾ-ներում ներառված են դասավանդման մեթոդների մանրամասն նկարագրություններ, գործարկվում են ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ԱՏՊՔ-ում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցույթային հիմունքներով, բացառությամբ՝ ոլորտային «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» միջին

մասնագիտական կրթության ծրագրերի: Ընդունելության մասին տեղեկատվություն հրապարակվում է Քոլեջի ֆեյսբուքյան էջում և պաշտոնական կայքէջում: Կայքէջում առկա է «Դիմորդ» բաժինը, որտեղ ներկայացվում են մասնագիտությունները, դրանց գծով պահանջվող կրթության հիմքերը, անհրաժեշտ փաստաթղթերը, ընդունելության քննությունների ժամանակացույցը և արդյունքները: Դիմորդների քանակը գերազանցում է ընդունվողների քանակին: 2022թ-ին «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ դիմել է 28 հոգի, ընդունվել են 26-ը, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ դիմել են 38-ը,, ընդունվել են 26-ը, «Փոխադրումների կազմակերպում և տրանսպորտի կառավարում» մասնագիտությամբ դիմել են 43 հոգի, ընդունվել են 25-ը: Քոլեջում առկա են նաև թռուցիկներ: Դիմորդների հավաքագրման նպատակով քոլեջի աշխատակիցները շրջում են դպրոցներով, բաժանում թռուցիկներ, բուկլետներ, ծանոթացնում առկա մասնագիտություններին և հնարավորություններին: Քոլեջում կազմակերպվում է նաև «Բաց դռների օր»: Ինքնավերլուծությունից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ԱՏՊՔ-ում վերջին տարիներին ուսանողների թվաքանակը կայուն է:

Փորձագիտական ացից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց խնդիրների լուծման համար առաջնային օղակ են համարում կուրսղեկներին: Կրթական կարիքների վերհանման համար կիրառվում են նաև մի շարք հարցումներ, օրինակ՝ «ՈՒԽ-ի կատարած աշխատանքների արդյունավետության և որակի գնահատման», «Պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատմա», «Առաջին կուրսի ուսանողների բավարարվածության» և այլն, տարին 2 անգամ կազմակերպվում է հանդիպում տնօրենի հետ, որակի պատասխանատուն կատարում է մշտադիտարկումներ, ուսանողական խորհրդի անդամները իրականացնում են շրջայցեր, առկա է «Ուսանողության ձայն» արկղիկ:

Վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց չկա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները վարչական անձնակազմին կարող են դիմել ցանկացած պահի: Ուսումնական տարվա ընթացքում տնօրենը 2 անգամ հանդիպում է ուսանողներին՝ անձամբ լսելու բողոքներն ու առաջարկությունները: Այդ հանդիպումների արդյունքում Քոլեջի տնօրենը ձեռնամուխ է եղել հետևյալ խնդիրների լուծմանը՝ դասերը ժամը 09.00 սկսելու փոխարեն սկսվեն 09.30, տարածաշրջանի տարբեր գյուղերից հստակ ժամանակացույցով աշխատող ավտոբուսներով եկող ուսանողների չուշանալու նպատակով, դասապրոցեսը տևի 80 րոպե 40/40-ի փոխարեն. փոխվել են շերտավարագույրները, ստեղծվել է գրադարանային խորհուրդ, որը կազմակերպում է զանազան միջոցառումներ ուսանողների շրջանում գրքերի նկատմամբ սերը և հետաքրքրությունը խթանելու նպատակով:

Լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ ուսանողները ստանում են քննաշրջանից և կուրսային աշխատանքներ գրելուց առաջ:

ԱՏՊՔ-ում գործում է կարիերայի կենտրոն, որն ունի հստակ կանոնակարգ, ներկայացնում է ՀՀ ԿԳՄՄՆ-ին հաշվետվություն: Կենտրոնը մշտական կապ է պահում Արտաշատի զբաղվածության տարածքային կենտրոնի, քիչ քանակի գործատուների և կազմակերպությունների հետ: Վերջին 5 տարիների կտրվածքով շրջանավարտների զբաղվածության մակարդակը ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, որ շրջանավարտների հիմնական մասը շարունակում է կրթությունը ավարտելուց անմիջապես հետո, մնացած շրջանավարտների մեջ քանակապես գերազանցում են ոչ

մասնաագիտությամբ աշխատող շրջանավարտները, նրանց հաջորդում են գործազուրկները և ամենաքիչ տոկոսն են կազմում նրանք, ովքեր աշխատում են իրենց մասնագիտությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտները տեղեկանում են թափուր աշխատատեղերի առկայության մասին պաշտոնական կայքէջում պարբերաբար հրապարակվող հայտարարությունների կամ հեռախոսազանգերի միջոցով, բայց հիմնականում ցածր աշխատավարձի կամ աշխատատեղի հեռու գտնվելու պատճառով չեն ցանկանում աշխատել: Այս խնդրի լուծման համար քոլեջը մեծ ջանքեր է գործադրում՝ փորձելով ընդլայնել գործատուների շրջանակը, բայց դա առայժմ չի հաջողվում գործատուների քիչ շահարգռված լինելու պատճառով:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի կենտրոնի պատասխանատուի նախաձեռնությամբ ուսանողները մասնակցել են մի շարք էքսպոների, որոնցից մեկի ժամանակ էլ ներկայացրել են իրենց քոլեջը՝ մասնավորապես «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունն ու այդ մասնագիտության շրջանակում նախագծած և կարած հագուստի սեփական մոդելները: Կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ ուսանողները համագործակցում են ՈԱԱԿ-ի հետ, կարերայի պատասխանատուն սոցիալական ցանցերում վարում է «Շրջանավարտակենտրոն» քաղաքականություն՝ «Ծանոթացում մեր շրջանավարտների հետ» խորագրով, տեղադրելով հարցազրույցներ իրենց մասնագիտության մեջ հաջողություն գրանցած շրջանավարտների հետ, դիմորդներին և ուսանողներին մոտիվացնելու և քոլեջի ընձեռած հնարավորություններին ծանոթացնելու նպատակով:

ԱՏՊՔ-ում հետազոտական աշխատանքներ համարվող կուրսային աշխատանքների և ռեֆերատների մեջ հետազոտական և վերլուծական բաղադրիչները մասնագիտություններում ընդհանուր առմամբ բացակայում են:

Հարկ է նշել, որ առկա են որոշ ուսումնաօժանդակ նյութեր, որոնք ուսանողները կազմել են քոլեջում իրենց կազմակերպած բաց դասերի նյութերի հիման վրա, որոնք էլ իրենց մեջ պարունակել են հետազոտական տարրեր, ինչպես օրինակ «Գրանդ Քենդի ընկերության մարքեթինգային ռազմավարությունը» ուսումնաօժանդակ նյութը: Մի քանի ՄԿԾ-ների՝ ինչպես օրինակ «Կոսմետիկայի և դիմահարդարման արվեստ» մասնագիտության ուսանողները կատարում են հետազոտական բնույթի աշխատանքներ պատրաստելով տարատեսակ կրեմներ, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները պարտրաստում են շարժական և անշարժ պրոթեզներ, «Դեղագործության» բաժնի ուսանողները գնում են Բուսաբանական այգի տարածաշրջանի բույսերին ծանոթանալու համար, «Սառնարանային տնտեսություն» բաժնի ուսանողները սառնարանների տարբեր մասերց սառնարանների հովացնող համակարգ էին պատրաստել, հետազոտական բաղադրիչներ էին առկա նաև «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Հագուստի մոդելավորորում» մասնագիտությամբ սովորող ուսանողների աշխատանքներում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը պլանավորում է ներդնել դիպլոմային աշխատանքներ:

Ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին հանդիսանում է «Ուսանողական խորհուրդը», որն ունի իր կանոնադրությունը: Քոլեջի բոլոր խորհուրդներում ընդգրկված են ուսանողներ՝ խնդիրներ և առաջարկություններ վեր հանելու նպատակով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մի մասը տեղեկացված չէ, թե ովքեր են ընդգրկված խորհուրդներում: Խորհուրդներում ընդգրկված ուսանողները վերջին տարիներին ոչ մի խնդիր վեր չեն հանել: Ուսանողական խորհուրդը պարբերաբար իրականացնում է շրջայցեր, հարցումներ սոցիալական հարթակում, կազմակերպում հանդիպումներ խնդիրներ վեր հանելու նպատակով, բայց իրավունքների պաշտպանության համար, որպես առաջնային օղակ, ուսանողները դիմում են կուրսղեկներին: «Ուսանողական խորհուրդը» ուսանողների կողմից ընկալվում է, որպես տարատեսակ միջոցառումներ կազմակեպող և արտալսարանական կյանքը հետաքրքրացնող կառույց:

Որպես ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման մեխանիզմ կիրառվում են մի շարք հարցումներ, որոնցից են՝ ուսանողի կողմից դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի գնահատումը: Դրանց արդյունքների հիման վրա, նախապես քոլեջի կողմից 80% բավարարվածության շեմը չհաղթահարած դասախոսներից յուրաքանչյուրի համար կազմակերպվում և իրականացվում են անհատական խորհրդատվություններ, մշակվում բարելավման պլան, իսկ կատարած աշխատանքների արդյունավետությունը պարզելու համար իրականացվում են կրկնակի դասալսումներ և հարցումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ ԱՏՊՔ-ն դիմորդներ հավաքելու նպատակով իրականացնում է շրջայցեր դպրոցներում, կազմակերպում է բաց դռների օր, ակտիվ վարում է պաշտոնական կայքէջը և սոցիալական ցանցերի էջերը: Իրականացվող աշխատանքներից որոշների արդյունավետությունը կարելի է գնահատել դիմորդների համար կազմված հարցաթերթիկներով, որտեղ ընդգրկված հարցերից մեկի միջոցով կարելի է պարզել, թե ինչպես է դիմորդը տեղեկացել ԱՏՊՔ-ի մասին, բայց կան իրականացվող աշխատանքներ, որոնք որպես տարբերակ ընդգրկված չեն հարցաթերթիկներում: Հետագայում դիմորդների հավաքագրման համար կիրառվող մեխանիզմների առավել ճշգրիտ թիրախավորման համար պետք է գնահատել բոլոր աշխատանքների արդյունավետությունը: Դրական է համարվում այն փաստը, որ դիմորդների թիվը գերազանցում է ընդունվողների թվին, ինչը հնարավորություն է տալիս ՄՈՒՀ-ին ընտրելու բարձր առաջադիմությամբ ուսանողներին:

Փորձագիտական խումբը կարևորում է այն փաստը, որ որ ՄՈՒՀ-ում առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող մարմին՝ Ուսանողական խորհուրդը և չնայած այն փաստին, որ ուսանողական խորհուրդը կիրառում է մի շարք մեխանիզմներ ուսանողների խնդիրների վերհանման ուղղությամբ, կազմակերպում է շրջայցեր, հանդիպումներ, ուսանողական խորհրդի անդամները պտտվում են հարկերում հետևելու կարգուկանոնին, ուսանողների հետ ակտիվ մշտական կապի մեջ է սոց.ցանցերի միջոցով, միևնույն է կարիքների վեր հանման համար առաջնային օղակ հանդիսանում են կուրսղեկները: ՈՒԽ-ն ուսանողների կողմից ընկալվում է ժամանցային միջոցառումներ կազմակերպող կառույց: Դրական է այն, որ ուսանողների կարիքների բավարավածության վերաբերյալ իրականացվում են հարցումներ ՈՒԽ-ի կատարած աշխատանքների, պրակտիկայի, դասախոսական անձնակազմի, կուրսային աշխատանքների վերաբերյալ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողները ՄՈՒՀ-ի կողմից ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն քննաշրջանից և կուրսային աշխատանքներ գրելուց առաջ:

Վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց չկա, ուսանողները իրենց առաջարկներով և խնդիրներով կարող են դիմել ցանկացած պահի, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ սահմանված ժամանակացույցը աշխատանքները կդարձնեն առավել համակարգված:

Դրական է դիտարկվում Կարիերայի կենտրոնի համագործակցությունը ՀՀ ՈԱԱԿ-ի, գործատուների, գործընկերների հետ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ պետք է ընդլայնել համագործակցությունների և գործատուների շրջանակը՝ շրջանավարտների աշխատանք գտնելու հնարավորությունները մեծացման համար: Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև այն փաստը, որ քոլեջի ուսանողներները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայնը» նախագծին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հանձնարարականները, ռեֆերատները, կուրսային աշխատանքները ուսանողների մոտ չեն զարգացնում հետազոտական-վերլուծական հմտությունները: Որոշ մասնագիտություններով սովորող ուսանողների աշխատանքների մեջ առկա են հետազոտական բաղադրիչներ և փորձագիտական խումբը կարծում է, որ այդ դրական փորձը ամեն մասնագիտության մեջ յուրովի պետք է ինստիտուցիոնալացնել: Դրական կդիտվի նաև դիպլոմային աշխատանքների կիառումը Քոլեջում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, դիմորդների քանակը գերազանցում է ընդունվողների քանակին, ուսանողների հոսքը վերջին տարիներին կայուն է, ուսանողները ցանկացած ժամանակ կարող են դիմել վարչական անձնակազմին, առկա են որոշ խորհրդատվական ծառայություններ և մատուցվող ծառայությունները գնահատող մեխանիզմներ, իրականացվում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն:Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ ԱՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ ՌԾ-ի՝ ԱՏՊՔ-ն իր առջև նպատակ է դրել վարել արդյունավետ և միասնական կադրային քաղաքականություն: Այդ նպատակին հասնելու համար քոլեջը խնդիր է դրել «Բարեփոխել և համալրել դասախոսական կազմը՝ բավարարելով ժամանակակից կրթարժեքների միտումները»: Այդ նպատակով պլանավորված են որոշակի քայլեր, որոնց արդյունքում քոլեջը

նախատեսում է լուծել դրված խնդիրը: Սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ: Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցի ընթացքում պարզվեց, որ ԱՏՊՔ-ում առկա են մի շարք փաստաթղթեր, որոնցում ամրագրված են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության սկզբունքները: Քոլեջի հաստիքացուցակի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Քոլեջն ապահովված է ՌԾ նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմով, սակայն Քոլեջում չկա արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներով զբաղվող կառույց: Քոլեջն առաջնորդվում է ԱՏՊՔ կանոնադրությամբ, որում ընդհանրական անդրադարձ կա աշխատողների իրավունքներին և պարտականություններին: 24.12.2020թ.-ին քոլեջի կողմից մշակված «Ներքին կարգապահական կանոններ»-ում նույնպես ամրագրված են գործատուի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները:

ՊԴ կազմի ընտրության ժամանակ ԱՏՊՔ-ն առաջնորդվում է նաև կրթական չափորոշիչներում նկարագրված դասավանդողներին ներկայացվող պահանջները: Բացի կրթական չափորոշիչի պահանջներից՝ Քոլեջում մշակվել են «Պաշտոնի անձնագրեր», որոնց մեջ ամրագրված են կրթական ծրագրերում ընդգրկված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները: Առկա են ընդհանուր պահանջներ, որոնք պարտադիր են բոլոր աշխատակիցների համար, և մասնագիտական պահանջներ, որոնք յուրաքանչյուր դասախոսի համար սահմանված են՝ ելնելով դասավանդվող մոդուլի կամ առարկայի վերջնարդյունքներից:

2018թ.-ից Քոլեջի դասախոսական կազմը համալրվում է մրցույթային սկզբունքով: Քոլեջի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը 01.06.2022թ-ի դրությամբ ներառում է 82 աշխատակից, որոնցից 77-ը համարվում են հիմնական, իսկ 5-ը՝ համատեղությամբ աշխատողներ: Աշխատողների մեջ զգալի մաս են կազմում Քոլեջի շրջանավարտները՝ մոտ 10%: Պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսները սակավ են: Շրջանավարտներին աշխատանքի ընդունելու նման քաղաքականությունը Քոլեջը համարում է իր տված կրթության նկատմամբ վստահության դրսևորում, որի արդյունքում Քոլեջի անձնակազմը համալրվում է տեղացի երիտասարդ, հեռանկարային կադրերով: Աշխատողների ընդունման և հեռացման համար Քոլեջում գործում են հստակ սահմանված կարգեր: Աշխատանքի ընդունման և հեռացման մեխանիզմների արդյունավետությունը վերլուծող գործիքներ քոլեջում դեռևս մշակված չեն: Քոլեջում դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ձևավորումն իրականացվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, Կրթության մասին օրենքի և քոլեջի ներքին իրավական ակտերի հիման վրա:

Մինչ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանը, դասախոսների ընդունելությունը իրականացվել է փորձաշրջան անցելու կարգի համաձայն: Ներկայումս մշակվել է դասախոսի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հարցաշարի և հարցատոմսերի կազմման ընթացակարգը: Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը քոլեջը հրապարակում է «Կրթություն» շաբաթաթերթում և/կամ տեղական մամուլում, քոլեջի պաշտոնական կայքէջերում: Մրցույթի ընթացքը ձայնագրվում է: Մրցույթի անցկացման համար պատասխանատու հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են առանձին մատյանում և պահպանվում են քոլեջում: Մրցույթի արդյունքների վերաբերյալ

որոշումը կայացվում է հանձնաժողովի անդամների քվեարկությամբ: Մրցույթի արդյունքները հրապարակվում են՝ ամփոփիչ արձանագրությամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը որոշ նեղ մասնագիտական մոդուլների գծով ունի դասախոսների ներգրավման խնդիր: Մասնավորապես՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության նեղ մասնագիտական մոդուլների դասավանդման համար ներգրավվել են քոլեջի վերջին տարիների շրջանավարտներին: «Սառնարանային տնտեսություն» և «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտություններում առկա են թափուր հաստիքներ: Հայտարարված մրցույթներին դիմողները սակավ են, երբեմն նաև դիմողներ չլինելու պատճառով մրցույթը չի կայանում: Քոլեջն իրականացնում է որոշ քայլեր այդ խնդրի լուծման ուղղությամբ: Քոլեջում զեղչվում են աշխատակիցների ուսանող-երեխաների ուսման վճարները մինչև 20%-ի չափով, բացի այդ, համեմատական աճ է նկատվում աշխատակիցների աշխատավարձի բարձրացման ուղղությամբ՝ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը միջին հաշվով բարձրացել է 6%-ով, ուսումնաօժանդակ կազմինը՝ 17%-ով, իսկ վարչականինը՝ 11%-ով:

Դասախոսների կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտական կրթական չափորոշիչների սահմաններում ուղղակիորեն որոշվում է դասալսումների և Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից իրականացված հարցումների միջոցով: Դասալսումներն իրականացվում են համաձայն «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության» ընթացակարգի: Ըստ կազմակերպման ձևի անցկացվում են՝ պլանավորված, փոխադարձ և չպլանավորված դասալսումներ: Դասալսումներ են իրականացնում տնօրենը, ուսումնական գծով տնօրենի տեղակալը, ամբիոնի վարիչները, ՈՆԱԿ պատասխանատուն, ինչպես նաև կիրառվում են փոխադարձ դասալսումներ: Դասալսումների արդյունավետությունը գնահատելու համար մշակված են հստակ պահանջներ և ընթացակարգեր: Առկա են դասալսումների արձանագրություններ, արձանագրություններում անդրադարձ կա սահմանված կարգում ամրագրված գրեթե բոլոր չափանիշներին: Դասալսումների արդյունքների հիման վրա դասախոսներին տրվում են համապատասխան հանձնարարականներ (խորհրդատվություններ): ԱՏՊՔ-ի դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները գնահատելիս կարևորվում է ուսանողների կարծիքը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները բարձր են գնահատում դասախոսների կատարած աշխատանքը և քոլեջում ստացած գիտելիքները: Ըստ հարցումների՝ ուսանողների 70%-ից ավելին գոհ է դասախոսի աշխատանքից: Քոլեջը նախատեսում է դասալսման արդյունքներով գնահատել դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպական, դասախոս-ուսանող հարաբերությունների ձևավորման և դասը կազմակերպելու ու վարելու համար ժամանակակից մեթոդներ կիրառելու ունակությունները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նման գնահատումները հիմնականում ուղղված են դասավանդման, գնահատման մեթոդներին, դասախոս-ուսանող փոխհարաբերություններին, մանկավարժական մոտեցումներին, իսկ մասնագիտական կարողությունների գնահատումն ամբողջական չէ:

Դասալսումների արդյունքները վերլուծվում են ընթացակարգով սահմանված՝ համապատասխան ձևաթղթում և գրանցվում վարման գրանցամատյանում: Դասալսումների արդյունքները քննարկվում են նույն օրը դասավանդողի հետ: Վերլուծությունների արդյունքների

հիման վրա տրամադրվում են խորհրդատվություններ, և դրանց իրականացման ուսումնասիրության նպատակով դասալսումները կրկնվում են:

Քոլեջում ՈՆԱԿ-ի կողմից իրականացվում է նաև ուսանողի կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի և որակի արդյունավետ գնահատման հարցում: Հարցման արդյունքում սահմանված շեմը (80% դրական կարծիք) չհաղթահարած դասախոսները ստանում են թերությունների վերացման հանձնարարականներ: Որոշակի ժամանակ հետո անցկացվում է կրկնակի հարցում վերհանված խնդիրները կարգավորելու նպատակով: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ ուսանողների դժգոհությունների գերակշիռ մասը վերաբերում էր այս կամ այն դասախոսի դասի վարման և անձնային որակներին: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ կրկնակի հարցման արդյունքներով սահմանված շեմը չհաղթահարելու դեպքեր չեն արձանագրվել:

Ըստ ԱՏՊՔ ինքնավերլուծության՝ Քոլեջում դասախոսների գնահատման գործընթացը դեռ լիարժեք կարգավորված չէ, քանի որ հաշվի է առնվում միայն ուսանողների կարծիքը և դասալսումների արդյունքները: 2021-2022 ուսումնական տարում քոլեջում ձեռնարկվել է «ՀՀ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու» ուղեցույցի համաձայն դասախոսների գնահատման կանոնակարգ մշակել, որի համաձայն դասախոսներին գնահատում են ոչ միայն ուսանողները, այլ նաև ղեկավար մարմինները, արտաքին շահակիցները, ծնողները: Սակայն պարզվեց, որ գործընթացը դադարեցվել է միջին մասնագիտական կրթության համակարգում սպասվող փոփոխությունների պատճառով: Քոլեջում կիրառվում են նաև դասընթացների փաթեթներ (պորտֆոլիո). յորաքանչյուր դասախոս ունի իր պորտֆոլիոն, որով դասախոսները պլանավորում և իրականացնում են իրենց դասընթացը: Դասախոսների պորտֆոլիոն չի ներառում դասընթացի գնահատումներ և բարելավումներ:

Քոլեջի դասախոսական կազմի գնահատման կանոնակարգերը ու ընթացակարգերը նախատեսում են թափանցիկության մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս դասախոսական կազմին տեղեկացված լինելու իրենց աշխատանքի կատարողականին՝ թերություններին և ձեռքբերումներին, իսկ ղեկավարությանը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ խնդիրները շտկելու և բարելավելու համար:

«Աշխատակիցների պարգևատրման, խրախուսման և առաջխաղացման կարգ»-ում նշված է ոչ միայն խրախուսման, այլ նաև տույժերի մասին. փորձաքննության ընթացքում գնահատման արդյունքներով պայմանավորված տույժերի կիրառման դեպքեր չարձանագրվեցին: Նշված կարգով սահմանված են խրախուսման տարաբնույթ մեխանիզմներ: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ խրախուսման մեխանիզմները կիրառվում են, այդ թվում՝ նաև ֆինանսական:

Վերջին տարիներին ԱՏՊՔ-ում նկատելի են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ: Քոլեջում կարևորվում է սկսնակ դասախոսների հետ կատարվող աշխատանքը: Առկա է սկսնակ «Սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքների և խրախուսման ընթացակարգ» փաստաթուղթը, որով առաջնորդվում են ամբիոնների վարիչները, սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքների պլանավորման և իրականացման ժամանակ: Դասախոսների մասնագիտական առաջընթացի այլ մեխանիզմ առկա չէ:

Այցի ընթացքում պարզվեց, որ հարցումների վերլուծությունների հիման վրա կան վերհանված կարիքներ, յուրաքանչյուր դասախոսի համար տրված են մեթոդական հանձնարարականներ (խորհրդատվություններ), սակայն նեղ մասնագիտական մոդուլներ դասավանդողների համար Քոլեջը վերապատրաստումներ չի կազմակերպում: Դասախոսները մասնակցել են միայն ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Քոլեջը կարևորում է նեղ մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը և պատրաստ է աջակցել դասախոսներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերջին շրջանում Քոլեջում մշակված և ներդրված ներքին իրավական ակտերը, դրանց կենսունակությունն ապահովելու համար կիրառվող մեխանիզմների առկայությունը ԱՏՊՔ առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար լուրջ նախադրյալներ են ստեղծում: Դրական է գնահատվում, որ Քոլեջն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը որոշ նեղ մասնագիտական մոդուլների գծով ունի դասախոսների ներգրավման խնդիր և դրականորեն արձանագրում է, որ Քոլեջն այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ է իրականացնում՝ նպաստելով դասախոսական կազմի կայունության ապահովմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ ոչ մրցունակ աշխատավարձի և պրակտիկ ոլորտից դասախոսների սղության պայմաններում առանձնապես կարևոր է կարիքների վերհանումը և Քոլեջում առկա ներուժի մասնագիտական որակների շարունակական բարելավմանը միտված քաղաքականության իրագործումը: Մշտադիտարկման և անցկացված հարցումների միջոցով Քոլեջում արձանագրվել է դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների կատարելագործման ու թարմացման վերապատրաստումների անհրաժեշտություն: Գովելի է, որ Քոլեջի և՛ ղեկավար կազմը, և՛ աշխատակիցները, և՛ դասախոսական կազմը տարբեր ծրագրերի շրջանակներում պարբերաբար վերապատրաստումներ են անցել, սակայն մտահոգիչ է, որ դասախոսական կազմի վերապատրաստումները հիմնականում եղել են մեթոդական բնույթի: Նեղ մասնագիտական վերապատրաստումների հնարավորության սակավությունը կարող է վտանգել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը, ինչպես նաև խոչընդոտել Քոլեջի զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փատը, որ Քոլեջն աշխատում է իր շրջանավարտներին ներգրավելու միջոցով կադրային ռեզերվ ստեղծել, զուգահեռաբար՝ Քոլեջում գործատու դասախոսների թվի մեծացումը կնպաստի աշխատաշուկայի կարիքների ներառմանը ՄԿԾ-ներում և ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների զարգացմանը, ինչպես նաև Քոլեջի դասախոսների հետ փորձի փոխանակմանը: Ողջունելի է, որ Քոլեջն աշխատանքի է ընդունում իր շրջանավարտներին՝ որպես իր տված կրթության նկատմամբ վստահության դրսևորում՝ դրանով իսկ նպաստելով դասախոսական կազմի երիտասարդացմանն ու կադրային խնդիրների լուծմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ երիտասարդ դասախոսների պարբերաբար իրականացվող մասնագիտական վերապատրաստումները կնպաստեն ՄԿԾ-ների բարելավմանը:

Ողջունելի է, որ Քոլեջում յուրաքանչյուր դասախոս կիրառում է դասընթացների փաթեթներ (պորտֆոլիո)՝ պլանավորելով և իրականացնելով իրենց դասընթացները: Փորձագիտական խումբը նշում է, որ պորտֆոլիոները դասընթացի պլանավորման, իրականացման, գնահատման և վերանայման ամբողջական փաթեթ դարձնելու պարագայում կբարեկավվի դասախոսի

աշխատանքը: Դրական է գնահատվում, որ Քոլեջում առկա են դասախոսների նյութական խրախուսման մեխանիզմներ և դեպքեր:

Դրական է, որ Քոլեջը դասալսման արդյունքներով փորձում է գնահատել դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպական, դասախոս-ուսանող հարաբերությունների ձևավորման և դասը կազմակերպելու ու վարելու համար ժամանակակից մեթոդներ կիրառելու ունակությունները: Քանի որ նման գնահատումները հիմնականում ուղղված են դասավանդման, գնահատման մեթոդներին, դասախոս-ուսանող փոխհարաբերություններին, մանկավարժական մոտեցումներին, իսկ մասնագիտական կարողությունների գնահատումն ամբողջական չէ, ուստի դասալսումների արդյունավետությունը կարող է խոչընդոտվել:

Փորձագիտական խումբը դրական է համարում փոխադարձ դասալսումների և մեթոդական աջակցության պլանավորումն ու իրականացումը, ինչը կարող է նպաստել Քոլեջի դասախոսների շրջանում փորձի փոխանակմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում կրկնակի հարցումների մեխանիզմի կիրառումը, որի արդյունքում հնարավոր կդառնա գնահատել դասընթացի բարելավման նպատակով դասախոսներին տրված հանձնարարականների (խորհրդատվությունների) արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ն իր սահմանած նպատակների իրականացման համար ունի կայուն դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ, ձեռնարկում է երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջխաղացմանն ուղղված հստակ քայլեր, փորձում է ստեղծել Քոլեջի կարիքներին համապատասխան կադրերի ռեզերվ, ներդրվել է դասախոսների դասընթացների փաթեթները (պորտֆոլիո), գործում են դասախոսների գնահատման և խրախուսման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ԱՏՊՔ-ն ունի 2020թ. հաստատված «Հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն», որում նկարագրված են հետազոտական աշխատանքների կատարման ոլորտում քոլեջի նպատակները, աշխատանքների ձևաչափերը՝ դիպլոմային աշխատանքներ, կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, կամ այլ՝ դասախոսի կողմից հանձնարարվող անհատական կամ խմբային աշխատանքներ: Քաղաքականությունում նշվում է, որ քոլեջում

իրականացվող յուրաքանչյուր հետազոտական աշխատանքի տեսակի համար սահմանվում է ընթացակարգ, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա է միայն «ՈՒսանողների կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման» ընթացակարգ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հետազոտության ոլորտում քոլեջը չունի սահմանած հետազոտական հետաքրքրությունների և առաջնահերթությունների հստակ շրջանակ, ինչպես նաև համահնչեցված չէ հետազոտության կապը տարածաշրջանի կարիքների հետ: Առկա չէ նաև երկարաժամկետ և կարճաժամկետ ռազմավարություն՝ իրագործելու հետազոտության ոլորտում նախպես սահմանված նպատակադրումները:

ԱՏՊՔ-ի 2019-2023թթ. ՌԾ-ի իրակնացման պլան-ժամանակացույցում ներառված գործողություններից է՝ ընձեռել ուսանողներին հնարավորություն սեփական տեսակետի և ստեղծագործ մտքի զարգացման համար՝ որոշակի հետազոտական աշխատանքների կատարման ունակությունների, անհատական որակների, հնարամտության ստուգման նպատակով, որի ակնկալվող արդյունքը համակողմանի զարգացած ուսանողն է: 2021թ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցի կատարողականով նշյալ գործողության արդյունքային ցուցիչներ են՝ կուրսային աշխատանքները և ռեֆերատները, մրցույթները («Հայկի սերունդ», «Լավագույն շարադրություն»), բանավեճի խմբակը ակումբը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում կուրսային աշխատանքները իրականացվում են 2021թ.-ից: Ռեֆերատները տրամադրվում են հիմնականում հանրակրթական առարկաներից և կատարված ռեֆերատները քանակապես զգալիորեն գերազանցում են կուրսային աշխատանքներին: 2021-2022 ուստարում քոլեջում կուրսային աշխատանքներ են իրականացվել միայն «Հաշվապահական հաշվառում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ներով, իսկ 2022-2023 ուստարվա համար պլանավորված և հաստատված է կուրսային աշխատանքներ իրականացնել ավարտական կուրսերի բոլոր ՄԿԾ-ներում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ փորձագիտական խմբի կողմից դիտարկվող ՄԿԾ-ներից «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության ավարտական կուրսի վերջին կիսամյակն է, սակայն դեռևս հստակեցված և ըստ ուսանողների բաշխված չեն կուրսային աշխատանքների թեմաներն ու ղեկավարները:

Ինչ վերաբերում է մրցույթներին և բանավեճերին, ապա քոլեջը չի նախաձեռնում դրանց կազմակերպումը, միայն ապահովում է մասնակցություն («Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն Հարավային կովկասում» մրցույթ, «Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ» Youth Engaged in Society – Yes ծրագրի բանավեճի հանրապետական մրցարշար):

Դիտարկվող ՄԿԾ-ներում փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված կուրսային աշխատանքները, ռեֆերատները ընդհանուր առմամբ տեղեկատվական և նկարագրողական բնույթի աշխատանքներ են, չեն ընդգրկում ուսանողների սեփական տեսակետի, ստեղծագործական մտքի դրսևորումներ, բացակայում է վերլուծական բաղադրիչը: Դիտարկվող ՄԿԾ-ների հանձնարարականները ևս չեն նպաստում ստեղծագործական մտքի և քննադատական-վերլուծական մտածողության զարգացմանը, քանի որ պարունակում են հիմնականում տեսական հարցեր, երբեմն էլ դասագրքային խնդիրներ, ելնելով արդյունքի առանձնահատկություններից:

ՄԿԾ-ների համար առկա են արդյունքների գնահատման թերթիկներ։ Ոչ բոլոր ՄԿԾ-ների ընթացիկ հանձնարարկաններում են առկա ուսանողի անհատական մտածելակերպն արտահայտող և հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ։ Զուգահեռաբար հարկ է նշել, որ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» (պատրաստում են կոսմետիկ քսուկներ), «Դեղագործություն» (դեղաբույսերից պատրաստում են թուրմեր), «Հագուստի մոդելավորում և նախագծում» (հագուստի ինքնատիպ ձևավորում աքսեսուարներով), «Համակարգչային գեղարվեստական նախագծում» (որոշակի աշխտանքների համար հայկական տառատեսակների ընտրություն), «Ատամնատեխնիկական գործ» (գիպսային աշխատանքների մշակում), «Խոհարարական գործ» (անհատական բաղադրատոմսերի կազմում) ՄԿԾ-ների գործնական և անհատական հանաձնարարականներում առկա են ուսանողների կողմից ինքնուրույն ստեղծագործական-վերլուծական մոտեցումներ, որոնք ունեն համակարգման և խորքային վերլուծությունների կարիք։

2021թ. Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատվել է «Կուրսային աշխատանքներից ուսանողների բավարարվածության» կանոնակարգ։ Համաձայն կանոնակարգի՝ քոլեջում հետազոտական աշխատանքների կազմակերպման որակի բարելավման նպատակով գործածության է դրվել կուրսային աշխատանքների բարելավմանը միտված հարցման կանոնակարգը, որի արդյունքների վերլուծությունները կատարվել են քոլեջի ՈՆԱԿ-ի կողմից, և հարցման արդյունքներով կատարվել է առաջարկ՝ վերանայել կուրսային աշխատանքների թեմաները։ Այցից պարզ դարձավ, որ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում թեմաները որոշակիորեն փոփոխվել են, սակայն վերլուծական բաղադրիչի իրականացման պահանջների փոփոխություն չի իրականացվել։ Հարկ է նշել, որ քոլեջը պլանավորել է ՄԿԾ-ներում ներդնել նաև դիպլոմային աշխատանքներ, սակայն փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում քոլեջում առկա չէին պլանավորված դիպլոմային աշխատանքների թեմաներ, դրանց ներդրման և իրականացման ժամկետներ։ Քոլեջի կողմից գործնական քայլեր չեն ձեռնարկվում հետազոտական գործունեության խրախուսման և դրանց համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացման ուղղությամբ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության դասախոսն իր նախաձեռնությամբ հավաքագրել և կազմել է «Հաշվապահական խնդիրների, թեստերի և առաջադրանքների ժողովածու», որը ամբիոնի դասախոսների կողմից լայնորեն կիրառվում է դասապրոցեսում։ «Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման» ամբիոնի կողմից լավագույն գնահատված շուրջ յոթ կուրսային աշխատանքներ դարձել են ուսումնաօժանդակ նյութեր։ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ-ի «Ավտոտրանսպորտի էկոլոգիա» մոդուլը դասավանդող դասախոսը, ուսումնասիրելով Հայաստանյան մայրուղիները՝ կատարել է որոշակի հետազոտություն, և այն ուսումնաօժանդակ նյութի տեսքով տրամադրել ուսանողներին։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը հետազոտության իրականացման ոլորտում նպատակադրված է գործուն քայլեր իրականացնել 2022-2023 ուստարվանից, սակայն դեռևս հետազոտության իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն։ Հետազոտության ոլորտում քոլեջի առաջընթացի գնահատման ցուցիչները ընդգրկուն չեն (կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, մրցույթներ, բանավեճեր),

դրանց հետ կապված առկա են միայն քանակական տվյալներ (օրինակ՝ 2021-2022 ուստարում 85 կուրսային աշխատանք, 282 ռեֆերատ)։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՏՊՔ-ն ունի հետազոտական աշխատանքների կատարման ոլորտում քոլեջի նպատակները, աշխատանքների ձևաչափերը ներառող հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն, սակայն վերհանված և վերլուծված չեն տարածաշրջանի հետազոտական կարիքները, հետազոտական առաջնահերթությունները համահնչեցված չեն այդ կարիքներին, քոլեջի ՌԾ-ով սահմանված չեն հետազոտական հետաքրքրությունների և առաջնահերթությունների շրջանակը, ուստի հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականությունը չի կարող արդյունավետություն ապահովել, քանի որ նշյալ ոլորտում ռազմավարական ուղղորդումն ուղղակիորեն բացակայում է։ Փորձագիտական խումբը հակված է՝ հետազոտական առաջնահերթությունները սահմանելու, տարածաշրջանի կարիքները վերհանելու և դրան համահունչ երկարաժամկետ ու կարճաժամկետ պլաններ մշակելու պարագայում քոլեջում կխթանվի հետազոտական գործունեության իրականացումը։

Չնայած որ քոլեջի 2019-2023թթ. ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույցով որոշակի հետազոտական աշխատանքների կատարման ունակությունները ստուգելու նպատակով նախատեսված է ուսանողներին հնարավորություն տալ սեփական տեսակետը և ստեղծագործ միտքը զարգացնել, որի համար արդյունքային ցուցիչներ են սահմանվել կուրսային աշխատանքները, ռեֆերատները, մրցույթներն ու բանավեճերը, այնուհանդերձ մտահոգիչ է, որ կուրսային աշխատանքները դեռևս նոր են ներդրվել, ռեֆերատները հիմնականում հանրակրթական առարկաներից են տրամադրվում, մրցույթների ու բանավեճերի կազմակերպման առումով քոլեջը նախաձեռնողականություն չի ցուցաբերում, ուստի հետազոտության ոլորտում դեռևս քոլեջի գործունեության արդյունավետությունը վտանգված է։

Անհանգստացնող է, որ փորձաքննության ընթացքում դիտարկվող ՄԿԾ-ների կուրսային աշխատանքներում, ռեֆերատներում, առանձին դասընթացների ընթացիկ հանձնարարականներում բացակայում է վերլուծական բաղադրիչը, դրանք տեղեկատվական, նկարագրողական աշխատանքներ են, ուր ուսանողների սեփական տեսակետի, ստեղծագործական մտքի դրսևորումները արտահայտված չեն։ Ընդհանրության մեջ՝ փորձագիտական խմբի կողմից ուսումնասիրված աշխատանքները միտված չեն ստեղծագործական մտքի և քննադատական-վերլուծական մտածողության զարգացմանը, արդյունքում խոչընդոտվում է հետազոտական բաղադրիչի իրագործումը։ Վերոնշյալին զուգորդելով՝ փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջի որոշ ՄԿԾ-ներում առկա են հետազոտական տարբեր պարունակող աշխատանքներ, որոնք համակարգման, խորքային վերլուծությունների և որպես լավ փորձ՝ տարածելու կարիք ունեն։

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ՄԿԾ-ներում դիպլոմային աշխատանքներ ներդրված չեն, չնայած որ քոլեջն իր առաջիկա պլանավորումներում, արդեն-իսկ սահմանել է դիպլոմային աշխատանքների իրականացման որոշակի գործողություններ, սակայն հարկ է նշել՝ փորձագիտական այցի ընթացքում դեռևս իրատեսական քայլեր չկային։

Դրական է, որ տարբեր ՄԿԾ-ների դասախոսներ իրենց ուսումնառության նյութերը, հավաքագրված տեստերի և խնդիրների ժողովածուն, ուսումնաօժանդակ նյութերը կիրառում են

դասապրոցեսին, այդուհանդերձ, դրանք հատուկենտ դեպքեր են, և անհրաժեշտություն է զգացվում խթանել և նպաստել դասախոսների հետազոտական աշխատանքների իրականացմանը՝ ձեռքբերված արդյունքը ուսումնական գործընթացում կիրառելու նկատառումով:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ն ցանկանում են զարկ տալ հետազոտական գործունեությանը, սակայն ակնհայտ է՝ քանի դեռ քոլեջը գործնական քայլեր չի ձեռնարկում ընդգրկուն առաջընթացի գնահատման ցուցիչներով գործուն հետազոտական ռազմավարության մշակման և ներդրման ուղղությամբ, կանխատեսելի չէ հետազոտության ոլորտում շոշափելի արդյունքների ձեռքբերումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ն չի սահմանել հետազոտության ոլորտում իր հետաքրքրությունների ու հավակնությունների շրջանակը, հետազոտական առաջնահերթություններ-տարածաշրջանի կարիքներ կապն արտահայտված չէ, դիտարկվող ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ գրեթե չկան, թույլ է հետազոտության և ուսումնառության միջև եղած կապը, հետազոտության ոլորտում քոլեջի առաջընթացի գնահատման ցուցիչները ընդգրկուն չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ՀՀ ԿԳՄՄՆ ԱՏՊՔ-ն գործում է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, որտեղ ապահովված է տրանսպորտային միջոցների հասանելիությունը: Քոլեջն ունի 1 ուսումնական մանաշենք՝ 21256 քմ. ընդհանուր մակերեսով և 1 արհեստանոցային տարածք՝ 21095 քմ. ընդհանուր մակերեսով: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ շենքային պայմանները համապատասխանում են կրթական միջավայրին և ամբողջությամբ ապահովում են ուսումնական գործընթացի իրականացումը:

Քոլեջն ունի 28 լսարան (ներառյալ առարկայականները), միջոցառումների կազմակերպման համար 2 դահլիճ (մեծ և փոքր), մարզադահլիճ և սպորտդահլիճ (հանդերձարաններով), հարակից սենյակներում տեղակայված է գրադարանը և արխիվը: Քոլեջն ունի 2 համակարգչային լսարան, որոնցից 1-ում առկա է «Smart» գրատախտակ, ուսուցչանոց, բուժկետ, նախնական զինվորական պատրաստության, հաշվապահական հաշվառման, տեխնիկական տեխնոլոգիաների և ծրագրավորման, լեզուների կաբինետներ, վարչական անձնակազմի համար նախատեսված առանձնասենյակներ: Դրանք պատշաճ կահավորված են: Քոլեջում առկա են անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված անօրգանական քիմիայի, անատոմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ,

խոհարարական լաբորատորիա։ Արհեստանոցային բլոկում են տեղակայված փայտամշակման, եռակցման աշխատանքների, ավտովերանորոգման և փականագործական արհեստանոցները, ավտոկառուցվածքի, սառնարանների մոնտաժման և նորոգման, կարի արտադրության, վարսահարդարման և դիմահարդարման լսարան-լաբորատորիաները, ատամնատեխնիկական լաբորատորիան, լսարանը՝ կից գիպսանոցով։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ՝ Քոլեջի հիմնական ուսումնական շենքը և գործածվող օժանդակ կառույցները (արհեստանոցներ, մասնագիտական լսարան-լաբորատորիաներ) պատշաճ կահավորում ունեն և գտնվում են բարվոք վիճակում։

Քոլեջն ունի 59 համակարգիչ, որոնցից 10-ը ձեռք է բերվել վերջին 2 տարվա ընթացքում՝ Քոլեջի բյուջի հաշվին, մնացած համակարգիչները ֆիզիկապես մաշված են, մեծ մասը օգտագործվում է վերանորոգման արդյունքում։ Քոլեջում առկա են դյուրակիր համակարգիչներ և պրոյեկտորներ, որոնք տեղաշարժվում են դասասենյակից դասասենյակ՝ ելնելով համապատասխան դասի պահանջներից։ Հարցումների վերլուծություններից վեր է հանվել, որ Քոլեջի որոշ կրթական ծրագրեր ունեն հզոր համակարգիչների կարիք։ 2021-2022 ուստարում վերհանված կարիքի հիման վրա Քոլեջը ՀՀ ԿԳՄՄՆ-ից ստացել է 8 համակարգիչ, 2-ն էլ՝ ձեռք է բերել իր միջոցներով։ Փորձագիտական այցի տվյալներով՝ կա բանավոր պայմանավորվածություն գործընկերների հետ՝ նրանց օգտագործած, սակայն պիտանի և հզոր համակարգիչները քոլեջին տրամադրելու հետ կապված։ Համակարգչային ռեսուրսների պակասը Քոլեջը կարողանում է լրացնել նաև համագործակցելով ուսանողների հետ (դասապրոցեսին նրանք բերում են իրենց դյուրակիր համակարգիչներն ու դասերը կազմակերպում նաև դրանց միջոցով)։

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Խոհարարական գործ» ՄԿԾ-ների դասասենյակ-արհեստանոցներն ու լաբորատորիաները բարվոք վիճակում են, ունեն տեխնիկական հագեցվածություն, ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով, պահպանված են անվտանգության նորմերը։ Վերոնշյալ մասնագիտություններում գործնական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ ուսումնական նյութերն ամբողջությամբ տրամադրվում է Քոլեջի կողմից։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ լաբորատորիաներում առկա ուսումնական նյութերը բավարարում են ՄԿԾ-ների իրականացմանը, որն արտացոլված է նաև Քոլեջի ծախսերի բաշխվածությամբ։

Քոլեջի բուժկետը ապահովված է սանիտարահիգիենիկ պայմաններով և առաջին օգնության դեղորայքով, առկա է բուժքրոջ պաշտոնի նկարագիր և վարվում է գրանցամատյան։

Շենքում տեղակայված սպորտդահլիճը և մարզադահլիճը կահավորված են համապատասխան մարզագույքով և ունեն հանդերձարաններ։ Քոլեջում գործող գրադարանը այնքան էլ մեծ չէ, սակայն առկա գրականության անվանացանկը մուտքագրված է համակարգչում և աշխատանքներ են տարվում առկա մասնագիտական և գեղարվեստական գրքերի թվայնացման ուղղությամբ (Քոլեջի կայքէջում առկա է թվային գրադարան, որը բաղկացած է երեք բաժիններից՝ մասնագիտական գրականություն, գեղարվեստական գրականություն և առարկայական գրականություն)։

ԱՏՊՔ-ն ունի «Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականություն», «Աշխատակիցների պարգևատրման, խրախուսման և առաջխաղացման կարգ», «Հաշվապահության կանոնակարգ», կազմում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ և ներկայացնում է բյուջեի կատարողականի մասին «Հիմնարկի բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն»: ԱՏՊՔ-ի բյուջետային մուտքերի գերակշիռ մասն ապահովվում է պետական ֆինանսավորման հաշվին՝ 2021թ. կազմելով շուրջ 86,3%, ուսման վարձավճարները կազմում են մուտքերի 13,7%-ը: Քոլեջը դրամական մուտքեր կարող է ապահովել նաև լրացուցիչ կարճաժամկետ ծրագրերի և դրամաշնորհային ծարգրերի հաշվին, վարձակալական վճարներից, որոնք պարբերաբար չեն իրականացվում և Քոլեջի համար կայուն եկամտի աղբյուր չեն համարվում: Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Քոլեջի ծախսային հոդվածներում 84% ցուցանիշով գերակշռում է աշխատավարձը և հավելավճարները: Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ԱՏՊՔ-ն պրակտիկաների կազմակերպման համար իրականացնում է ծախսեր, մասնավորաբար՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» ՄԿԾ-ի նախաավարտական պրակտիկան պատշաճ իրականացնելու համար վճարում է կատարել ԱՁ-ին, որպեսզի ուսանողները պրակտիկայի ընթացքում հնարավորություն ստանան օգտվել այնտեղ առկա նյութատեխնիկական բազայից: Քոլեջն ամբիոնների կողմից տրամադրված պահանջագրերի հիման վրա առանձնացնում է նաև լաբորատոր ուսումնական նյութերի, մասնագիտական սարքավորումների և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսերը, որոնք օժանդակում են գործնական պարապմունքների իրականացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի պրակտիկաների ծրագրերը կազմվել են գործատուի հետ այնպես, որ գործատուն իր պրակտիկան անցկացնի քոլեջում, քոլեջի գույքով՝ ելնելով գործատուի կարիքներից, սակայն Քոլեջի համակարգչային լաբորատորիաները նոր համակարգիչներով վերազինելու կարիք ունեն, ինչպես նաև նոր համակարգչային լսարանների անհրաժեշտություն կա: Քոլեջը դեռևս գործատուների հետ համատեղ ռեսուրսային բազայի օգտագործման համագործակցությունների չունի, և փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2022-2023 ուստարվա պլանավորումներով արդեն նախատեսվել են նմանատիպ համագործակցություններ:

Քոլեջում փաստաթղթաշրջանառությունը կառավարվում է «Գործավարության» կանոնակարգով: ԱՏՊՔ-ն ձեռք է բերել «ՀԾ հանրային հատված», «TAXSERVICE», «CLIENTTREASURY» համակարգչային ծրագրերը: Քոլեջը համագործակցում է ԿՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ, միացել է դասագրքերի ընդունում, հանձնում, բաշխում ընթացքը կանոնակարգող ԴՇՀ ծրագրին: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից և այլ շահակիցներից փաստաթղթերի հոսքը ապահովում է Mulberry համակարգի և ԱՏՊՔ-ի էլեկտրոնային փոստի միջոցով: Ներքին փաստաթղթշրջանառությանը նպաստում է այն հանգամանքը, որ աշխատակազմը ապահովված է համապատասխան տեխնիկայով և ինտերնետային կապով: Քոլեջում գործում է նաև արխիվային ստորաբաժանում, որը կատարում է փաստաթղթերի առանձին տեսակների արխիվացում:

Քոլեջի տարածքը ցանկապատված է, տեղադրված տեսախցիկների միջոցով իրականացվում է վերահսկողություն միջանցքներում և բակային տարածքում: Առկա է ՔՊ շտաբի

պետի պաշտոնի նկարագիր և ՔՊ շտաբի հանձնաժողովի և խմբերի ցուցակ: Քոլեջի մասնաշենքերում տեղադրված են հակահրդեհային պաշտպանության սարքավորումներ, կրակմարիչներ և տեսանելի վայրերում փակցված են մասնաշենքից տարհանման սխեմաներ:

ԱՏՊՔ-ում ՆԶՊ առարկայի ուսումնառության համար առկա են 2 ուսումնական զինատեսակ, որոնք պահպանվում են հատուկ անվտանգության համակագով ապահովված դասասենյակում առանձնացված խցում:

Հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ Քոլեջում չկան, չկան նաև համապատասխան պայմաններ: Շենքը հարմարեցված չէ հենաշարժային խնդիրներ ունեցողների համար:

ԱՏՊՔ-ում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են՝ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները, քոլեջում կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները, ինչպես նաև «Ուսանողի ձայնը» առաջարկությունների արկղի պարունակության վերլուծությունը: Հարցաթերթերում առկա են ռեսուրսների ու ծառայությունների օգտակարությունը, հասանելիությունն ու արդյունավետությունը գնահատող հարցեր, ինչպես նաև կարծիքներ և առաջարկություններ: Հարկ է նշել, որ ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ ՈՆԱԿ-ի իրականացրած հարցումների արդյունքների վերլուծությունները հասանելի են Քոլեջի կայքէջում: 2020-2021 և 2021-2022 ուստարիներին ՈՆԱԿ-ի կողմից իրականացվել է «Ուսանողների բավարարվածության գնահատում» և «Դասախոսական և վարչական անձնակազմի բավարարվածության գնահատում» հարցումները, որոնց արդյունքներն ամփոփվել են գրաֆիկական տեսքով՝ տարեցտարի ցուցաբերելով բավարարվածության ցուցանիշի աճ: Դուրս են բերվել ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի նշած առաջարկները, մասնավորապես՝ հնարավորություն ստեղծել Քոլեջում պատճենահանում իրականացնելու համար, վերաբացել բուֆետը, հաճախակի կազմակերպել շաբաթօրյակ, վերանորոգել մարզադահլիճը, բարեկարգել քոլեջի տարածքը, համակարգչային լսարանների վերազինում նոր համակարգիչներով, համալրել գրադարանը նոր մասնագիտական գրքերով և այլն: Առկա է նաև 2020-2021 ուստարվա հարցումների՝ ՈՆԱԿ-ի հանձնաժողովի քննարկումների արդյունքում մշակված բարելավման մեխանիզմները, որոնք հիմնականում համընկնում են նախանշված առաջարկներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՏՊՔ-ի ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը: Քոլեջում առկա լսարանային ֆոնդը, լաբորատորիաները, կաբինետները, մարզադահլիճը, սպորտդահլիճը, բուժկետը բարվոք վիճակում են և ունեն պատշաճ կահավորում՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացումը: Գովելի է, որ Քոլեջի ռեսուրսատար մասնագիտությունների դասասենյակ-արհեստանոցներն ու լաբորատորիաները տեխնիկապես հագեցած են, ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով և ռեսուրսներով, և, որ կարևոր է՝ գործնական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ ուսումնական նյութերը, որոնք ամբողջությամբ տրամադրվում է Քոլեջի կողմից, բավարարում են ՄԿԾ-ների գործնական պարապմունքների իրականացմանը: Արդյունքում Քոլեջի ՄԿԾ-ների իրականացման համար ձևավորված է ուսումնական միջավայր:

Թեև վերհանված կարիքի հիման վրա Քոլեջը ՀՀ ԿԳՄՄՆ-ից ստացել է համակարգիչներ, մի մասն էլ ձեռք է բերել իր միջոցներով, որոշ դեպքերում ուսանողներն են իրենց համակարգիչները կիրառում դասապրոցեսին, այդուհանդերձ անհանգստացնող է, որ Քոլեջն առանձին մասնագիտությունների համար ունի համակարգչային ռեսուրսների կարիք, ինչն առաջիկայում չբավարարելու պարագայում կարող է խոչընդոտվել առանձին ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը: Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը դեռևս գործատուների հետ համատեղ ռեսուրսային բազայի օգտագործման համագործակցություններ չունի, սակայն 2022-2023 ուստարվա պլանավորումներով արդեն-իսկ ծրագրված են նմանատիպ համագործակցությունները, ինչի արդյունքում զգալիորեն կբարելավվեն ուսանողների արտադրական պրակտիկաներն ու գործնական հմտությունները:

Դրական է համարվում, որ Քոլեջի գրադարանի առկա գրականության անվանացանկը մուտքագրված է համակարգչում և աշխատանքներ են տարվում առկա մասնագիտական և գեղարվեստական գրքերի թվայնացման ուղղությամբ, բացի այդ՝ Քոլեջի կայքէջում առկա է թվային գրադարան՝ նպաստելով գրադարանային ֆոնդի կիրառման հնարավորությունների մեծացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի գործունեությունն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, ուր գերակշռում են ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների ձևով ստացվող եկամուտները, առկա են նաև մուտքեր ուսման վարձավճարներից, որոնք վերջին տարիներին դինամիկ աճ են ապահովել: Ինչ վերաբերում է լրացուցիչ կարճաժակետ դասընթացներից, վարձակալական վճարներից և դրամաշնորհային ծրագրերից մուտքերին, ապա դրանք Քոլեջի համար կայուն եկամտի աղբյուր չեն կարող համարվել, քանի որ իրականացման որոշակի պարբերականություն չեն ապահովում: Փորձագիտական խումբն իր դիտարկումն ունի առ այն, որ Քոլեջը ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացման կարիք ունի՝ միտված եկամուտների կայուն աճի ապահովմանը: Դրական է, որ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը զուգընթաց Քոլեջն ամբիոնների կողմից տրամադրված պահանջագրերի հիման վրա իրականացնում է լաբորատոր ուսումնական նյութերի, մասնագիտական սարքավորումների և հատուկ նպատակային այլ նյութերի ծախսեր, դրամական միջոցներ է հատկացնում նաև պրակտիկաների կազմակերպման համար՝ նպաստելով գործնական պարապմունքների իրականացմանը և ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Դրական է համարվում, որ Քոլեջում փաստաթղթաշրջանառության կառավարման համար ներդրվել է «Գործավարության» կանոնակարգը, առկա է Mulberry համակարգը, ներդրված է փաստաթղթաշրջանառության համակարգը՝ ապահովելով փաստաթղթավորման գործընթացների արդյունավետ իրականացումը:

Անվտանգության ապահովման տեսանկյունից փորձագիտական խումբը դրականորեն ամփոփում է, որ Քոլեջն ուսանողների և դասախոսների համար ապահովել է անվտանգ միջավայր, չնայած որ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար չկան համապատասխան պայմաններ:

Ողջունելի է, որ ԱՏՊՔ-ում առկա են ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների օգտակարության, հասանելիության և արդյունավետության գնահատման տարբեր մեխանիզմներ՝ նպաստելով ռեսուրսներից բավարարվածության գնահատմանը և կարիքի

վերհանմանը: Դրական է համարվում, որ իրականացված հարցման արդյունքները վերլուծվել են, նախանշվել են որոշ առաջարկներ, կարծիքներ և քննարկվել են ՈՆԱԿ հանձնաժողովում՝ առանձնացնելով բարելավման քայլերը: Արդյունքում, փորձագիտական խմբի դիտարկմամբ, ուսանողներն ու դասախոսները տրամադրվող ուսումնական ռեսուրսների օգտակարությունից և հասանելիությունից ցուցաբերում են գոհունակություն՝ փաստելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման մասին: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերը՝ ուղղված մասնագիտությունների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի ձևավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը, ՄԿԾ-ների իրականացման համար ձևավորված է ուսումնական միջավայր, զուգահեռաբար՝ Քոլեջի գործունեությունն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով, ուսանողներն ու դասախոսները բավարարված են տրամադրվող ուսումնական ռեսուրսների օգտակարությունից և հասանելիությունից, Քոլեջն ապահովում է ուսանողների և դասախոսների անվտանգությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ՌԾ-ով ԱՏՊՔ-ն իր խնդիրն է համարում ամրապնդել կառավարման համակարգային մոտեցման հուսալիությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունը: Սահմանված կարգով Քոլեջը ներկայացնում է հաշվետվություններ ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությանը, Պետական եկամուտների կոմիտեին, Վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների: Քոլեջում ներքին շահակիցների հանդեպ հաշվետվողականությունն ապահովելու համար առկա է ներքին հաշվետվողականության ապահովման գրաֆիկական սխեմա: Բացի ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովումից, Քոլեջը ապահովում է նաև արտաքին շահակիցների տեղեկացվածությունը քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ: Այս նպատակով քոլեջն իր կայքէջի /www.artcol.am/ փաստաթղթեր բաժնում տեղադրել է ինչպես գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերն ու քաղաքականությունները, այնպես էլ հաշվետվությունները: Հաշվետվություններ առկա են բոլոր ամբիոններում, ստորաբաժանումներում, դրանք ներառում են

քանակական վերլուծություններ, ամփոփումներ, նախանշված են բարելավման քայլերը, սակայն որակական վերլուծությունները և համադրությունները մասամբ են կատարված:

ԱՏՊՔ-ն, հաշվի առնելով տեղեկատվության տարածման առկա մեթոդները, ընթացկարգերի և գործընթացների թափանցիկությունն ապահովում է Քոլեջի կայքէջի միջոցով, որը ներքին և արտաքին շահակիցների համար պարբերաբար թարմացվում է անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներով: Քոլեջում առաջացած թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ են տեղադրվում «Կրթություն» շաբաթաթերթում և Քոլեջի ֆեյսբուքյան էջում: Քոլեջի ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը տպագրվել է նաև «Գործընթաց» երկշաբաթաթերթում:

Քոլեջում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներն են՝ հարցումները, սեմինարներ-քննարկումների ժամանակ հնչած կարծիքները, Քոլեջի գործունեության վերաբերյալ կայքի՝ հետադարձ կապով ստացված մեկնաբանությունները, միջոցառումները, հաշվետվությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը կարևորում է հասարակության բոլոր անդամների հետադարձ կապից օգտվելու հնարավորությունը: Քոլեջի կայքէջը և ֆեյսբուքյան էջը վարվում է դասախոսի կողմից, ում հասարակական հիմունքներով օգնում է քոլեջի շրջանավարտը, ով նաև ուսանող փորձագետ է: Ինստագրամյան էջը վարում է ՈՒԽ նախագահը: Այս աշխատանքներին հետևում է նաև ՈՆԱԿ պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը կայքեջի, ֆեյսբուքյան, ինստագրամյան էջերի հետադարձ կապի արդյունավետության վերլուծություն չի իրականացնում:

Մշակվել են «Սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության վերաբերյալ շահակիցների բավարարվածության» հարցաթերթեր, որոնցով հարցումն իրականացվել է 2022-2023 ուստարվա սեպտեմբերի 15-29 ընկած ժամանակահատվածում՝ որպես հարցումների իրականացման գործիք օգտագործելով Google Forms-ը, հարցման հղումը տարածվել է քոլեջի կայքէջի և ֆեյսբուքյան էջի միջոցով: Google Forms-ը տրամադրել է հարցադրումների վերլուծությունները գրաֆիկական տեսքով, ինչպես նաև աղյուսակային տեսքով հնարավորություն է տվել իմանալ հարցաթերթերի լրացման ժամանակի մասին: Այս փորձը քոլեջում հաջողված է այնքանով, որ այն հնարավորություն է տվել խնայել թե՛ մարդկային, թե՛ նյութական և թե՛ ժամանակային ռեսուրսներ:

Հասարակությանը նեղ մասնագիտական գիտելիքի փոխանցման համար ԱՏՊՔ-ն առաջարկում և իրականացնում է՝ «Զոդող», «Խոհարար», «Հաշվապահ», «Կարող», «WEB ծրագրավորող», «Համակարգչային օպերատոր», «Մատնահարդար», «Դիմահարդար», «Ծրագրավորող» կարճաժամկետ լրացուցիչ ծրագրեր, որոնք միտված են կարճ ժամանակահատվածում տարածաշրջանի աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջների բավարարմանը: Ծրագրերի իրականացման տևողությունը սահմանվում է ծրագրի բնութագրիչներով: Դասընթացների վերջում մասնակիցները ստանում են վկայական: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ կարճաժամկետ դասընթացները պարբերական բնույթ չեն կրում և իրականացվում են պահանջարկից ելնելով:

Քոլեջի ուսանողները մասնակցել են մի շարք կրթադաստիարակչական միջոցառումների, օրինակ՝ «Ամեն ժամանակների Պարույր Սևակը» միջոցառումը, «Մարդու իրավունքներ, խտրականությունից ցեղասպանություն» բանախոսությունը, «Նիկոտինի վնասակար

ազդեցությունն օրգանիզմի վրա» միջոցառումը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության օրվան նվիրված ամենամյա միջոցառումները: Մասնակցություն է եղել նաև «Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն Հարավային կովկասում» մրցույթին և «Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ» Youth Engaged in Society – Yes ծրագրի բանավեճի հանրապետական մրցարշարին: Ընթացիկ տարում մասնակցել են «Կրթություն և Կարիերա EXPO2022» ցուցահանդեսին: Քոլեջի ՈւԽ-ն կազմակերպել է մի շարք կամավորական ծրագրեր, որոնցից են 44-օրյա պատերազմի ընթացքում «Անիտեքս» կարի գործարանում սահմանապահ զինվորներին ուղարկվող քնապարկերի, սավանների և նմանատիպ այլ իրերի պատրաստման գործում օգնությունը, Արարատի մարզի մարզպետարանում իրականացված սննդի և հագուստի բաշխման աշխատանքների կազմակերպումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում ներդրված է հաշվետվողականության մեխանիզմ, առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքներ՝ նպաստելով Քոլեջի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը:

Դրական է համարվում, որ Քոլեջի կայքէջում տեղադրված են գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, քաղաքականությունները, հաշվետվությունները: Չնայած այդ հաշվետվություններում առկա են քանակական վերլուծություններ, ամփոփումներ, բարելավման քայլեր, այդուհանդերձ այդ հաշվետվություններում որակական վերլուծությունները և համադրությունները մասամբ են կատարված: Փորձագիտական խումբը նշում է, որ դրանք համապարփակ վերլուծական տեսքի բերելու պարագայում զգալիորեն կբարձրանա հաշվետվողականության արդյունավետությունը:

Գովելի է, որ Քելեջը ձևավորել և կիրառում է հարթակներ իր գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, և դրանք ակտիվորեն գործարկելու արդյունքում բարձրացել է ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունը քոլեջում իրականացվող գործընթացներից: Դրականորեն արձանագրվում է, որ քոլեջում գործում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, ուր իրենց մասնակցությունն ունեն ուսանողները, դասախոսները, շրջանավարտները, ՈՆԱԿ պատասխանատուն:

Թեև մշակվել է «Սոցիալական հարթակների բովանդակության և հետադարձ կապի արդյունավետության վերաբերյալ շահակիցների բավարարվածության» հարցաթերթեր՝ որպես հարցումների իրականացման գործիք օգտագործելով Google Forms-ը , և արդեն-իսկ 1 անգամ հարցում է կատարվել, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները կատարելագործելու և կայքեջի, ֆեյսբուքյան, ինստագրամյան էջերի արդյունավետության պարբերաբար վերլուծություն իրականացնելու պարագայում հասարակության հետ կապերն առավել ակտիվ կգործարկվեն:

Դրական է դիտարկվում, որ ԱՏՊՔ-ն հասարակությանը նեղ մասնագիտական գիտելիքներ է փոխանցում կարճաժամկետ լրացուցիչ ծրագրերի միջոցով՝ նպաստելով կարճ ժամանակահատվածում տարածաշրջանի աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջների բավարարմանը:

Գովարժան է, որ ԱՏՊՔ-ի ուսանողները մասնակցում են տարբեր միջոցառումների, էքսպոների, վերապատրաստումների, մրցաշարերի, իրականցնում են կամավորական ծրագրեր, աշխատանքներ, ինչի արդյունքում բարձրացել է հասարակության իրազեկվածությունը քոլեջում իրականացվող գործընթացներից և ուսանողների գիտելիքներից:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ում գործում է հաշվետվողականության հստակ մեխանիզմ, առկա են հարթակներ քոլեջի գործունեության մասին հասարակությանը իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, գործարկվում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման գործիքները, իրականացվում են հասարակությանը գիտելիքների փոխանցման ծրագրեր, խոշոր հաշվով՝ Քոլեջն իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը, ներքին շահակիցներին և հասարակությանը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշի 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: ԱՏՊՔ-ի գործող կանոնադրության մեջ «Կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ ՀՀ կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդողի և տարածողի դերը» և «Առաջավոր միջազգային փորձի տեղայնացումը, ինչպես նաև կրթական գլոբալ համակարգերին ինտեգրումը» ամրագրված են հիմնական նպատակների շարքում: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ԱՏՊՔ-ի գործող ՌԾ-ում արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող դրույթներ ամրագրված չեն: ՌԾ-ի SWOT վերլուծությունում որպես հնարավորություն դիտարկվում է միջազգային դրամաշնորհների ծրագրերի հնարավորությունների օգտագործում կրթական գործընթացների արդիականացման նպատակով:

Ըստ ԱՏՊՔ-ի ինքնավերլուծության՝ արտաքին կապերը և միջազգայնացումը՝ որպես նպատակ և զարգացման գերակա ուղղություն, Քոլեջի ռազմավարական փաստաթղթերում դեռևս ամրագրված չեն, ինչպես նաև արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ դեռևս մշակված չեն: Փորձաքննությամբ պարզվեց, որ ուսումնասիրված ու բացահայտված չեն արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման ոլորտում Քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացման ուղղությամբ ԱՏՊՔ-ում

գործընթացներ չեն պլանավորվում և իրականացվում։ Բացի այդ, վերլուծված և գնահատված չեն առկա գործընկերների հետ համագործակցային հնարավորությունները։ Քոլեջի պաշտոնական կայքի օտարալեզու տարբերակներ մշակված չեն։

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ Քոլեջում տեղական մակարդակում առկա են համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր, իսկ միջազգային մակարդակում առկա համագործակցությունները հիմնականում վերաբերում են ռեսուրսային բազայի համալրմանը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջն իր ռեսուրսային բազան բարելավել է միջազգային կազմակերպություններից՝ ՄԱԿ-ի, Միավորված ազգերի զարգացման ծրագրի, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի, ֆրանսիական Լիոն քաղաքաի Լիցեի և հայակական համայնքի կողմից տրամադրվող գույքի հաշվին։

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի ստորաբաժանումն իր գործառույթների շրջանակում աշխատանքներ է իրականացնում նաև արտաքին շահակիցների հետ։ Ի թիվս այլ աշխատանքների՝ վերջինս իրականացնում է սոցիալական գործընկերների՝ (գործատուներ, արհմիություններ, աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտներ) ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում։ Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների ու սոցիալական ընկերությունների հետ։ Ուսանողների մասնագիտական կողմնորոշման համար Քոլեջը կարևորում է համագործակցությունը «Զբաղվածության տարածքային կենտրոն»-ի հետ՝ զբաղվածության պետական ծրագրերին մասնակցելու ու շրջանավարտների համար թափուր աշխատատեղեր գտնելու նպատակով։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ տարբեր ծրագրերի շրջանակներում ԱՊՏՔ-ն համագործակցության հուշագիր ունի կնքած Հայաստանի գործատուների միության և ՀՀ տարածաշրջանային 12 պետական քոլեջների հետ։ Այցի ընթացքում պարզվեց, որ նշված հուշագրերի ներուժը Քոլեջը լիարժեքորեն չի օգտագործել։

Արտաքին կապերի ամրապնդման, կրթական ծառայությունների մատուցման նպատակով Քոլեջը կնքել է մի շարք հուշագրեր՝ «Գարանտ Դենտ» ՍՊԸ, «ԻՆՈՐԵՅՆ» ՍՊԸ, «ՊՈՒԼՄՈՄԵԴ» ՍՊԸ, «ՖԱՐՄ-ՄԱԿ» ՍՊԸ, «Արտաշատի ԼԻԳԱ» ՍՊԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» հասարակական կազմակերպության հետ։ Ըստ ԱՏՊՔ ինքնավերլուծության՝ այդ վայրերում Քոլեջի ուսանողներն անցկացնում են արտադրական, տեխնոլոգիական և նախաավարտական պրակտիկաներ։ Փորձաքննությամբ պարզվեց, որ Քոլեջում կազմակերպվում են միայն նախաավարտական պրակտիկաներ։

Քոլեջն ունի նաև կնքված պայմանագրեր՝ «Երևանի պետական համալսարան», «Գավառի պետական համալսարան», «Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան», «Հայաստանի պետական ագրարային համալսարան», «Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթագիտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ։ Այցի ընթացքում պարզվեց, որ հիշյալ պայմանագրերի հիմնական շահառուն քոլեջը չի։ Դրանք միտված են կրթության շարունակականությանը և չեն նպաստում քոլեջի հիմնական առաքելության իրագործմանը։

Համաձայն ԱՊՏՔ ինքնավերլուծության՝ միջազգայնացման հետ կապված խոչընդոտներից մեկն էլ ներքին շահակիցների օտար լեզվի իմացության ցածր մակարդակն է, մասնավորապես,

դասավանդողներն ունեն 31,25%, աշխատակիցները՝ 21,45%, ուսանողները՝ 37,58% օտար լեզվի իմացության մակարդակ: Առկա խնդիրը վեր է հանվել Քոլեջի կողմից, սակայն լուծումները հապաղում են: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ Քոլեջի ուսանողներն ու դասախոսները մասնագիտական գրականության ուսումնասիրման ժամանակ նույնպես բախվում են խնդիրների և դժվարությունների՝ պայմանավորված օտար լեզվի տիրապետման ոչ բավարար մակարդակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ փոխանակման միջազգային ծրագրերին կամ օտար լեզվով կազմակերպվող դասընթացներին Քոլեջի ուսանողների և աշխատակիցների մասնակցություններ չկան. ըստ Քոլեջի՝ պայմանավորված է մասնագիտական օտար լեզվին տիրապետող դասախոսների և ուսանողների սակավությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ԱՏՊՔ-ի գործող կանոնադրության մեջ արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ ամրագրված նպատակները տեղ չեն գտել Քոլեջի ՌԾ-ում: Ուսումնասիրված և ձևակերպված չեն արտաքին կապերի ու միջազգային համագործակցության ոլորտում Քոլեջի հետաքրքրություններն ու հնարավորությունները: Քոլեջում չկա արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներով զբաղվող կառույց, և ապագայի համար Քոլեջն այդ ուղղությամբ հստակ պլանավորումներ չունի: Արդյունքում խոչընդոտվում է Քոլեջի արտաքին կապերի հաստատման արդյունավետ քաղաքականության իրականացումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ տեղական մակարդակում Քոլեջն ունի տարբեր համագործակցություններ, սակայն դրանք ամրապնդելու և հնարավորինս Քոլեջի կրթական կարիքներին ծառայեցնելու ներուժն ամբողջությամբ չի օգտագործվում: Փորձագիտական խումբը գտնում է, որ առկա սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պարագայում գործատուների ռեսուրսների (և՛ մարդկային, և՛ նյութական) փոխշահավետ և նպատակային օգտագործումը կարող է հետագա համագործակցությունների համար նպաստավոր միջավայր ստեղծել: Քանի որ վերլուծված և գնահատված չեն առկա գործընկերների հետ համագործակցային հնարավորությունները, ուստի Քոլեջը լիարժեք չի կարող օգտագործել գործատուների ներուժն իր առջև ծառացած խնդիրների լուծման և կրթական գործընթացների բարելավման նպատակով: Փորձագիտական խումբը գտնում է, որ, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերի հետ գործընկերային համագործակցությունների ընդլայնումը կնպաստի Քոլեջի հետագա զարգացմանը:

Դրական է, որ Քոլեջն իր ռեսուրսային բազան բարելավել է միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող գույքի հաշվին, սակայն անհանգստացնող է, որ առկա միջազգային կապերը չեն ներառում մասնագիտական համագործակցությունների շրջանակ և տեսանելի չէ Քոլեջի նպատակադրումը դրանք զարգացնելու ուղղությամբ:

Գովելի է, որ Քոլեջն ունի նաև կնքված պայմանագրեր հայաստանյան տարբեր բուհերի հետ, սակայն դրանք հիմնականում ուղղված են կրթության շարունակականության ապահովմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ այդ համագործակցությունները ծրագրային և մասնագիտական հարթակ բերելու պարագայում Քոլեջն իրականացվող մասնագիտությունների լավարկման առումով դրական արդյունքներ կապահովի:

Մտահոգիչ է քոլեջի ուսանողների և դասախոսների մասնագիտական անգլերենի իմացության ոչ բավարար վիճակը, ինչը կարող է խոչընդոտել արդի մասնագիտական գրականությունից օգտվելու հնարավորությունը: Մտահոգիչ է նաև, որ հարցումների արդյունքում վեր հանված նշված խնդիրը բավարար ուշադրության չի արժանացել: Միևնույն ժամանակ, Քոլեջի կարծիքով օտար լեզվի իմացության ներկա մակարդակը չի նպաստում ակադեմիական շարժունությանը, միջազգային ծրագրերում մասնակցությանն ու ներգրավվածությանը, ինչն էլ հանգեցնում է նրան, որ Քոլեջն անհաղորդ է մնում գիտության և կրթության ոլորտի նորագույն ձեռքբերումներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի ՌԾ-ում որպես նպատակ ամրագրված չէ արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը, Քոլեջը չի մշակել արտաքին կապերը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականություն, այլ քոլեջների հետ արտաքին համագործակցությունների հարթակն ակտիվ չէ, վերլուծված և գնահատված չեն գործընկերային համագործակցությունների հնարավորությունները, Քոլեջը լիարժեքորեն չի օգտագործում արտաքին համագործակցությունների ներուժն իր առջև ծառացած խնդիրների լուծման և կրթական գործընթացների բարելավման նպատակով, ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը ցածր է, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: ԱՏՊՔ-ում որակի ներքին ապահովման համակարգը ներդրվել է 2020թ.-ից, զուգահեռաբար՝ 2019-2023թթ. ՌԾ-ով կրթության որակի բարձրացման շարունակական ամրապնդումը սահմանված է որպես ռազմավարական նպատակ, որի իրականացման համար ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմնված խնդիրներից է՝ որպես մատուցվող կրթական ծառայությունների պատասխանատվության ցուցիչ, դիտարկել որակի ներքին ապահովման կենտրոնը՝ ստեղծելով երաշխիքներ դրա կայուն գործարկման համար: Նշյալ խնդրի իրականացման գործողությունների շրջանակն է՝ սահմանել ՈՆԱ կենտրոնի գործունեության հիմնարար ուղենիշները՝ կայունացնելով համակարգի զարգացման հեռանկարները, ուրվագծել քոլեջի ՈՆԱ կենտրոնի ֆունկցիոնալ սահմաններն ու փոխհամագործակցության շրջանակները՝ ստեղծելով կրթության որակի շարունակական բարելավումն ապահովող նախադրյալներ, գնահատել շահակիցների բավարարվածության մակարդակը մատուցվող ծառայություններից, բարելավել ներքին գնահատման գործընթացը, նախաձեռնել և իրականացնել քոլեջի

գործունեության ինքնագնահատում՝ կանխելով ռազմավարական նպատակների իրագործումից շեղման ռիսկերը։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերը թվարկված գործողությունների թիրախային և արդյունքային ցուցիչները համապատշաճ են և՛ փաստաթղթային հենքով, և՛ քոլեջում կատարվող գործընթացների մակարդակով։

Քոլեջում մշակվել և ներդրվել են որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը՝ «Որակի ներքին ապահովման քաղաքականություն», «Որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ», «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն», «Մշտադիտարկման անցկացման կանոնակարգ», «Շահակիցների տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի հաստատման քաղաքականություն»։ Հարցումներն իրականացվում են առկա կանոնակարգերի հիման վրա, դրանք են՝ առաջին կուրսի ուսանողների բավարարվածության գնահատման, ուսանողների բավարարվածության գնահատման, շրջանավարտների բավարարվածության գնահատման, ուսանողների կողմից պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի և դասավանդման արդյունավետության գնահատման, դասախոսական և վարչատնտեսական անձնակազմի բավարարվածության գնահատման, գործատուների կողմից ուսանողների մասնագիտական պատրաստվածության գնահատման, պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման, ծնողի բավարարվածության գնահատման, հեռավար կրթությունը բարելավելու և գնահատելու վերաբերյալ, կուրսային աշխատանքներից ուսանողների բավարարվածության գնահատման, դասալսումների անցկացման և արդյունքների վերաբերյալ կանոնակարգերը։ Քոլեջում վերոնշյալ կանոնակարգերի հիման վրա իրականացվում են նույնանուն հարցումները։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարցումներն իրենց բովանդակությամբ ընդհանուր առմամբ խնդիրներ վերհանող են, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքների վստահելիության տեսանկյունից որոշ հարցումներ բարելավման կարիք ունեն։ Բոլոր հարցումներն ունեն վերլուծություններ, ամփոփումներ, նախանշված են անհրաժեշտ բարելավման քայլերը։ Հարկ է նշել, որ հարցումների արդյունքները քննարկվում են ՈՆԱ հանձնաժողովում։ Քոլեջում առկա վերլուծությունների փաթեթով դուրս են բերվել թիրախային խնդիրներ, որոնք ընդգրկվել են ՈՆԱ կենտրոնի հաշվետվության մեջ, մասնավորապես՝ համակարգչային ռեսուրսների սակավությունը, հետազոտական բաղադրիչի ներդրման անհրաժեշտությունը, այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների կարիքը, գնահատումը կատարվել է ոչ օբյեկտիվ, արտագրություն հեռախոսներից, տոմսերը կազմված են գրեթե միայն տեսական հարցերից, իրավիճակային հարցեր չեն պարունակում, հարցատոմսերի հարցերի կրկնություններ և այլն։ Նշյալ խնդիրների շուրջ նախանշված լուծումները ընդգրկված են աշխատանքային պլաններում, սակայն կատարման արդյունքները գնահատված չեն։ Հատկանշական է, որ գործատուների կողմից շրջանավարտների վերաբերյալ գոհունակության հարցման հարցաթերթերը կնքված և ստորագրված են կազմակերպության ղեկավարի կողմից։

2019թ. «Մշտադիտարկման անցկացման կանոնակարգով» սահմանված են մշտադիտարկման միջոցները՝ SWOT, հարցաթերթեր, համադրական վերլուծություններ, դասալսումներ, քննարկումներ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշյալ գործիքները կիրառելի են, սակայն հստակ պարբերականություն են ապահովում հարցումները, դասալսումները։ Դասալսումների արդյունքում վերհանված խնդիրների շուրջ յուրաքանչյուր դասախոսի համար

սահմանված են բարելավման քայլերը, որից հետո տվյալ դասախոսների մոտ դասալսումները կրկնվում են: Քոլեջի դասախոսները կազմում են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիո), որոնցով դասախոսները պլանավորում և իրականացնում են դասընթացները, սակայն դասընթացի գնահատում և վերանայում դեռևս չի իրականացվում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ներգրավված արտաքին շահակիցների կարծիքները հաշվի են առնվում կրթական ծրագրերում բարելավումներ իրականացնելու համար:

Քոլեջի ՈՆԱ կենտրոնն ունի տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ, 2021-2022 ուստարվա ՈՆԱ կենտրոնի աշխատանքային պլանում ամբողջությամբ ներառված չեն 2020-2021 ուստարվա հաշվետվությունից դուրս բերված բարելավման ենթակա խնդիրներն ու մշակված լուծումների տարբերակները: Ինչպես Քոլեջի մյուս ստորաբաժանումներում, այնպես էլ ՈՆԱ կառույցում աշխատանքային պլաններն ու գործունեության տարեկան հաշվետվությունները զուգորդելի չեն:

ԱՏՊՔ-ի Որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգը հաստատվել է 2020թ.-ի հուլիսին, որի հիման վրա ստեղծվել է ՈՆԱ կենտրոնի հանձնաժողովը և ՈՆԱ պատասխանատուի հաստիքը: Մինչ այդ՝ Քոլեջում ՈՆԱ գործընթացները իրականացվել են առանց հաստիքային աշխատող ունենալու: Հանձնաժողովը որակի ապահովման գործընթացները կառավարող մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է ըստ կանոնակարգով սահմանված խնդիրների, մասնավորաբար՝ արդիականացնել և զարգացնել կրթության որակի ապահովման համակարգը, ներդնել ուսումնական ստորաբաժանումների որակի ապահովման ներքին համակարգ, քոլեջում ներդնել որակի մշակույթ՝ ապահովելով շարունակական բարելավում, զարգացում և այլն: Հանձնաժողովում ընդգրկված են ուսումնական և վարչական աշխատանքները կազմակերպող, իրականացնող ղեկավար մարմիններ, դասախոսների, ուսանողների ներկայացուցիչներ: Հանձնաժողովում գործատուներ ներգրավված չեն: Փորձագիտական խումբն առանձնացնում է այն փաստը, որ քոլեջի ուսանողներներն ակտիվ մասնակցություն են ունեցել ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայնը» նախագծի շրջանակներում ուսանող-փորձագետների վերապատրաստմանը, որի արդյունքնում 30 ուսանող վերապատրաստվել են, ՈԱԱԿ-ի հավատարմագրման գործընթացներում 7 ուսանող ներառվել են որպես ուսանող-փորձագետներ, ներկա պահին շուրջ 15 ուսանող ավարտել են ուսանող-փորձագետների վերապատրաստման դասընթացները՝ հաշվառվելով ՈԱԱԿ-ի ուսանող-փորձագետների բազայում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջի ակտիվ ուսանողները շարունակում են հայտ ներկայացրել ուսանող-փորձագետների վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար: ՈՒսանողների միջոցով Քոլեջում ձևավորվել է Որակի մշակույթի տարածման հաջողված փորձ:

ՈՆԱԿ-ի գործունեության համար Քոլեջն առանձին ֆինանսական ռեսուրսներ չի տրամադրում և անհրաժեշտ դրամական միջոցները տրամադրվում են Քոլեջի բյուջեից: ՈՆԱ պատասխանատուն 2022-2023 ուստարվանից այլևս չի դասավանդում Քոլեջում, իրականացնում է միայն ՈԱ պատասխանատուի գործառույթները:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցներն իրենց մասնակցությունն ունեն որակի ապահովման գործընթացներին, մասնավորաբար՝ ուսանողները, դասախոսները, վարչատնտեսական անձնակազմը գործատուները, շրջանավարտները, ծնողները մասնակցում են տարբեր հարցումների, ուսանողներն ու դասախոսները ընդգրկված են կառավարման խորհրդում,

ուսումնամեթոդական խորհրդում, ՈՆԱ հանձնաժողովում, մասնակցում են ամբիոնների նիստերին, ուսանողները աջակցություն են ցուցաբերում կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացվող որոշ հարցումների անցկացման, կազմակերպման նաև արդյունքների մշակման գործընթացում: ՈւԽ-ի հետ համագործակցելով՝ ուսանողները կազմակերպում են ուսանողական համաժողովներ կրթության որակի պատասխանատուի մասնակցությամբ, որտեղ ներկայացվում են հարցումների ընդհանուր վերլուծության արդյունքները: ՈՆԱԿ-ի հանձնաժողովի անդամները մասնակցում են ընթացիկ քննություններին՝ գնահատելով քննությունների կազմակերպչական աշխատանքները և ընթացքը, դասախոսական և վարչատնտեսական անձնակազմը մասնակցում է ներքին ինքնավերլուծության գործընթացին, ուր իրենց ներգրավվածությունն ունեն նաև ուսանողները: Գործատուները ներգրավված են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում և իրենց ներկայացրած ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունները համարվում են մշտադիտարկման գործիք: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը նպատակադրվել է խորացնել շահակիցների հետ կապերը:

ՈՆԱ հանձնաժողովի կողմից իրականացվել է 2019-2020, 2020-2021, 2021-2022 ուստարիների գործունեության ներքին գնահատում: Փորձագիտական խմբի կողմից դիտարկված 2020-2021 ուստարվա ներքին գնահատումը վերլուծական է, ամփոփ ներկայացնում է Քոլեջի առկա վիճակն ու բարելավման ենթակա խնդիրները: Կան նաև խնդիրները լուծելու որոշ առաջարկներ:

ԱՏՊՔ-ն 2020թ. մշակել է «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն»-ը, որով սահմանված են վերանայման սկզբունքները, նպատակները, ՊԻԳԲ շրջափուլը: Հարկ է ընդգծել, որ ըստ նշյալ քաղաքականության՝ վերանայումը ներառում է տարբեր գործընթացների վերանայում և ուղղված է քոլեջի գործունեության շարունակական բարելավմանը, այլ ոչ թե՝ վերահսկմանը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջում իրականցվող որակի ապահովման գործընթացները միտված են համակարգային խնդիրների վերհանմանը, տեղորոշմանն ու գործընթացների լավարկմանը: ՈՆԱ համակարգը 2020թ.-ից է ներդրվել Քոլեջում, և վերանայումների պարբերականությունը դեռևս տեսանելի չէ:

Քոլեջն ինքնվերլուծությունն իրականացրել է 10 չափանիշով, այն նկարագրողական բնույթի է, սակավ են վերլուծությունները: Ինքնավերլուծության խմբում ներառված են ուսանողներ, դասախոսներ և փորձագիտական այցից ու ինքնավերլուծության բովանդակությունից ընկալելի է խմբի թիմային աշխատանքը:

Քոլեջի բոլոր հաշվետվությունները հրապարակվում են Քոլեջի կայքէջում, դասխոսները տեղեկացված են իրենց դասալսումների արդյունքներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱԿ-ի պատասխանատուն այլ բուհերի, քոլեջների հրապարակային ՈՆԱ փաստաթղթերի հետ համեմատություններ է իրականացնում, համագործակցում է ՈՆԱ պատասխանատուների հետ: Փորձագիտական խումբը դիտարկել է ՈՆԱ կենտրոնի 2020-2021 ուստարվա հաշվետվությունը, այն վերլուծական է, առկա են քանակական և որակական վերլուծություններ, սակայն դրանց ամփոփումները համակարգված ներկայացված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը մշակել է որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը և կրթության որակի շարունակական բարձրացումը համարում է ռազմավարական նպատակ, որի իրականացման համար ՌԾ-ի պլան-ժամանակցույցով սահմանված են համարժեք խնդիրները, գործողությունների

շրջանակը։ Միևնույն ժամանակ գովելի է, որ ՌԾ-ի պլան-ժամանակացույցով սահմանված գործողությունների թիրախային և արդյունքային ցուցիչները համահունչ են՝ նպաստելով Քոլեջում կրթության որակի բարելավման գործընթացների արդյունավետ իրականացմանը։

Դրական է, որ Քոլեջում հարցումներն իրականացվում են համապատասխան կանոնակարգերի հիման վրա։ Թեև այդ հարցումներն ընդհանուր առմամբ խնդիրներ շեշտադրող են, այդուհանդերձ, դրանցից որոշները արդյունքների վստահելիության տեսանկյունից բովանդակային առումով բարելավման կարիք ունեն։ Փորձագիտական խումբն արժևորում է, որ բոլոր հարցումները քննարկվում են ՈՆԱ հանձնաժողովում՝ ունենալով վերլուծություններ, ամփոփումներ, առանձնացված են թիրախային խնդիրներն ու անհրաժեշտ բարելավումները։ Չնայած որ այդ բարելավումները ընդգրկված են աշխատանքային պլաններում, այդուհանդերձ, դրանց կատարման արդյունքները գնահատված չեն, ինչը կարող է խոչընդոտել բարելավումների արդյունավետության գնահատմանը։

Գովելի է, որ գործարկվում են մշտադիտարկման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ SWOT վերլուծությունը, հարցաթերթերը, համադրական վերլուծությունները, դասալսումները, քննարկումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների դիտարկումները, որոնցից հստակ պարբերականություն են ապահովում հարցումներն ու դասալսումները։ Փորձագիտական խումբը նշում է, որ վերոնշյալ գործիքները պարբերաբար կիրառելու պարագայում էապես կբարելավվեն ՈՆԱ գործընթացները։ Դրական է, որ դասալսումների արդյունքում վերհանված խնդիրների շուրջ յուրաքանչյուր դասախոսի համար սահմանվում են բարելավման քայլերը, որից հետո միևնույն դասախոսների մոտ դասալսումները կրկնվում են՝ դիտարկելով բարելավման քայլերի ազդեցությունը։ Գովելի է, որ քոլեջի դասախոսները կազմում են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիո), սակայն դրանք ծառայում են միայն դասընթացների պլանավորման և իրականացման գործիք՝ արդյունքում անտեսելով դասընթացների գնահատումն ու վերանայումը։

Դրական է համարվում՝ Քոլեջի ՈՆԱԿ-ն ունի տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ, այդուհանդերձ, ինչպես Քոլեջի մյուս ստորաբաժանումներում, այնպես էլ ՈՆԱԿ-ում աշխատանքային պլաններն ու գործունեության տարեկան հաշվետվությունները զուգորդելի չեն՝ վտանգելով պլանավորում-կատարում պրոցեսի գնահատման արդյունավետությունը։

Արժանագով է, որ Քոլեջում որակի ապահովման գործընթացները կառավարում է ՈՆԱ հանձնաժողովը, ուր ընդգրկված են ուսումնական և վարչական ղեկավար մարմիններ, դասախոներ, ուսանողներ։ Փորձագիտական խումբը նշում է, որ ՈՆԱ հանձնաժողովում գործատուներ ներառելու պարագայում կբարձրանա ՈՆԱ գործընթացների կառավարման արդյունավետությունը։ Փորձագիտական խումբն արժևորում է, որ Քոլեջի ուսանողներն ակտիվ մասնակցում են ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայնը» նախագծի շրջանակներում ուսանող-փորձագետների վերապատրաստմանը՝ ունենալով իրենց մասնակցությունը հավատարմագրման գործընթացներին՝ որպես ուսանող-փորձագետներ։ Վերոնշյալն ուղղակիորեն նպաստել է Քոլեջում Որակի մշակույթի տարածմանը և ՈՆԱ գործընթացների բարելավմանը։

Դրական է դիտարկվում Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը տարբեր խորհուրդներում, նրանց մասնակցությունը հարցումներին, ներքին շահակիցների

ներգրավվածությունը ՈՆԱ հանձնաժողովի աշխատանքներին: Փորձագիտական խումբը դրական է գնահատում շահակիցների հետ կապերի խորացման քոլեջի նպատակադրումը, հատկապես՝ ՈՆԱ գործընթացներում գործատուներին ներգարավելու պարագայում կամրապնդվի քոլեջ-գործատու կապը կրթության որակի բարելավման համատեքստում:

Գովելի է, որ Քոլեջը յուրաքանչյուր ուստարվա համար իրականացնում է գործունեության ներքին գնահատում՝ ամփոփ ներկայացնելով Քոլեջի առկա վիճակն ու բարելավման ենթակա խնդիրները: Նշյալը փաստում է գործընթացների գնահատման մասին և հիմքեր է ստեղծում համակարգային խնդիրների վերհանման, տեղորոշման և շարունակական բարելավումները պլանավորելու և իրագործելու համար:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ ՈՆԱ պատասխանատուն համագործակցում է այլ բուհերի, քոլեջների ՈՆԱ պատասխանատուների հետ, նրանց հրապարակային ՈՆԱ փաստաթղթերի հետ համեմատություններ է իրականացնում: Բացի նշյալը՝ ՈՆԱ կենտրոնի տարեկան հաշվետվությունը, ներառելով քանակական և որակական վերլուծություններ, չեզոքացնում է հետագա բարելավումների կառավարման ռիսկերը՝ նպաստելով տվյալահենք բարելավումների ներդրմանն ու իրագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՏՊՔ-ի որակի ապահովման գործընթացները շարունակական են, միտված են կրթության որակի բարելավմանը, ՈՆԱ գործընթացների թիրախային և արդյունքային ցուցիչները համահունչ են, գործարկվում են առանցքային խնդիրների դուրսբերման մշտադիտարկման տարբեր գործիքներ, որակի ապահովման գործընթացները կառավարման կոնտեքստում են, առկա է Որակի մշակույթի տարածման հաջողված փորձ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարար
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար
4. Ուսանողներ	Բավարար
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ	Բավարար
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարար

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար

30 դեկտեմբերի 2022թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Մհերյան- 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից աշխատում է Եվրոպական համալսարանում որպես «Կառավարում» ամբիոնի դասախոս:

Էլեն Հարությունյան- 1992թ. ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը երկու մասնագիտություններով և ստացել էլեկտրոնային տեխնիկայի ինժեների և բժշկական կիբեռնետիկի որակավորումներ: 2009թ. ավարտել է Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը և ստացել մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում: Աշխատել է՝ Երևանի թիվ 144 դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցչուհի, Երևանի Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 դպրոցում որպես մաթեմատիկայի և գծագրության ուսուցչուհի, Ֆիզմաթ և բնագիտական առարկաների մեթոդմիավորման նախագահ, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի քոլեջում որպես ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն: Այժմ աշխատում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա ֆակուլտետում դեկանի տեղակալ, քոլեջում՝ մաթեմատիկայի դասախոս: Անցել է ՈԱԱԿ վերապատրաստումներ, Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական և Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ քոլեջներում եղել ՈԱԱԿ փորձագիտական խմբի անդամ:

Աշոտ Ավետիսյան- 1989 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1989-1991 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Սիբիրյան բաժանմունքի ասպիրանտուրայում: 1991-1996 թթ. աշխատել է Վայոց Ձորի մարզի Թառաթումբի ութամյա դպրոցում՝ որպես փոխտնօրեն, 1996-1998 թթ. Վայոց Ձորի մարզի Քարագլխի միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն: 2001-ից մինչ այժմ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի պրակտիկայի բաժնի վարիչն է և որակի կառավարման հանձնաժողովի նախագահը: Բարձրագույն մաթեմատիկայի դասախոս է: Երկու գիտական հոդվածների հեղինակ է: Համահեղինակել է ձեռնարկներ և ուղեցույցներ:

Մարինե Նաղդյան- 2020թ. ավարտել է հիմնական դպրոցը: Սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջի Մանկաբարձական գործ մասնագիտության 3-րկ կուրսում: Մասնակցել է ՈԱԱԿ–ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող–փորձագետների վեր ապատրաստմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

17.10.2022թ.-20.10.2022թ.

	17.10.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	15:40	16:40	60 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	16:50	17:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	18.10.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում, ամբիոնների վարիչներ, ներառյալ Հանրակրթ.ծրագր. բաժնի ղեկավարի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Դասալսումներ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչներիհետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	12:20	13:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:40	15:40	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի կենտրոնի պատ., պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ, մեթոդիստ)	16:50	17:50	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	19.10.2022թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտ. համ. ծրագրային ապահովում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	10:00	11:20	80 րոպե
2.	Հանդիպում «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտ. համ. ծրագրային ապահովում» կրթական ծրագրի ուսանողների հետ հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
5.	Ռեսուրսների դիտարկում			14:40	15:40	60 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			15:50	16:30	40 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:40	19:00	140 րոպե

	20.10.2022թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:10	12:00	50 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:10	13:00	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:30	190 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2019թ., 2020թ. ՌԾ պլան-ժամանակացույցի կատարողականներ:	1
2.	ՌԾ-ի պլան ժամանակացույցեր ըստ տարիների՝ 2020թ., 2021թ., 2022-2023ուս տարվա պլանավորումներ:	1
3.	ՌԾ-ի հիմքում դրված ներքին և արտաքին շահակիցների առաջարկների փաթեթ:	1
4.	Ներքին շահակիցների առջև հաշվետվողականության գրաֆիկական կառուցվածք, եթե առկա է:	1
5.	Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքների:	1
6.	Շահակիցներից ստացված արդյունքների քանակական և որակական վերլուծությունների փաթեթներ ըստ տարիների:	1
7.	ՌԾ-ի գնահատման ցուցիչների և ստացված արդյունքների համադրելիության վերլուծություններ, ամփոփումներ:	1
8.	ՌԾ-ի մշտադիտարկման, ընթացիկ վիճակի վերաբերյալ հաշվետվություններ, ամփոփումներ:	1
9.	2021-2022 ուստարվա, 2019-2020 ուս տարվա գործունեության ներքին ահատումներ:	1
10.	2019-ից ի վեր բոլոր տարիների կատարողականները:	1
11.	Փաստաթղթեր, որոնցում արտացոլված են գրադարանային խորհրդի կողմից վեր հանված խնդիրները	1
12.	Տնօրենի հաշվետվություններ:	1
13.	ԿԳՄՄՆ-ին տրամադրվող ֆինանսական հաշվետվություններ՝ 2020, 2021, 2022 /ըստ քոլեջի ստացած եկամուտների և կատարած ծախսերի հոդվածների/եթե Հարցաշարում կցված չէ/	2
14.	Անկախ աուդիտորական եզրակացություն, եթե առկա է: /2019-ից հետո/	2
15.	Աշխատավարձի հետ առնչություն չունեցող ծախսերի մասով անհրաժեշտ նկարագրություններ /բացատրություններ/՝ կցված բյուջեի պլանավորմանը:	2
16.	Բոլոր ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանները, հաշվետվությունները՝ վերջին 3 տարիների կտրվածքով:	2
17.	Կառավարման խորհրդի արձանագրություններ:	2
18.	Ստորաբաժանումների և այլ օղակների կիսամյակային հաշվետվություններ:	2

19.	Առարկայական, մոդուլային ծրագրեր:	3
20.	Տարբեր ստորաբաժանումների, ամբիոնների, դասախոսների աշխատանքային պլաններ:	3
21.	2019-2020, 2021-2022 ուստարիների հարցումների վերլուծություններ:	3
22.	Վերջին 5 տարիների ընթացքում որևէ նոր առարկայի կամ մոդուլի ծրագիր, որը նախաձեռնվել է քոլեջի կողմից:	3
23.	Դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատումներ:	3
24.	Դասավանդման մեթոդների արդյունավետության հարցումների վերլուծություն, եթե առկա է:	3
25.	Դասալսումների արձանագրություն:	3
26.	Քննական հարցատոմսեր 3 ՄԿԾ-ի շրջանակում:	3
27.	Գնահատման համակարգի մեթոդաբանություն, եթե առկա է:	3
28.	ՄԿԾ-ների հետ կապված շրջանավարտների, գործատուների հարցումների վերլուծություններ:	3
29.	2020,2021,2022թթ գործատուների կողմից շրջանավարտների գոհունակության հարցումների լրացված 3-ական օրինակ ամեն մասնագիտությունից:	3
30.	Խորհրդատվությունների համար կազմված ժամանակացույցեր:	4
31.	Կարիերայի կենտրոնի արձանագրություններ:	4
32.	ՈՒԽ-ի իրականացրած աշխատանքների արձանագրություններ:	4
33.	Ուսանողների հետ կնքված պայմանագրեր:	4
34.	Պրակտիկայի լրացված օրագրեր: Յուրաքանչյուր մասնագիտությունից 3 ական օրինակ:	4
35.	ՈՒսանողների թվաքանակն ըստ առանձին մասնագիտությունների:	4
36.	Պրակտիկայի ղեկավարների վերլուծություններ՝ ուսանողների պրակտիկաների վերաբերյալ:	4
37.	3 ՄԿԾ-ների գծով ՊԴ կազմին ներկայացվող մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ:	5
38.	2020-2021, 2021-2022 ուստարիների դասախոսների պորտֆոլիենր 3 ՄԿԾ-ների գծով:	5
39.	Դասալսումների վերլուծություններ:	5
40.	Մասնագիտական վերապատրաստումներ անցած դասախոսների ցանկ, եթե առկա է:	5
41.	Դրամական պարգևատրում ստացած դասախոսների ցանկ:	5

42.	2021թ-ի բոլոր օղակների աշխատանքային պլանը և հաշվետվությունները:	5
43.	3 ՄԿԾ-ների գծով կատարված հետազոտական կուրսայիններ, ռեֆերատներ, հետազոտական հանձնարարականներ:	6
44.	3 ՄԿԾ-ների գծով կատարված հետազոտական կուրսայիններ, ռեֆերատներ, հետազոտական հանձնարարականներ:	6
45.	Հետազոտական նպատակների կատարման հաշվետվություններ, վերլուծություններ:	6
46.	Բոլոր մասնագիտությունների ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ:	6
47.	Կուրսային աշխատանքների բավարարվածության հարցումների վերլուծություններ՝ 3 ՄԿԾ-ների գծով, ըստ տարբեր տարիների:	6
48.	Ընդունելության գրանցամատյաններ:	4
49.	ՄՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնություններն արտացոլող փաստաթղթեր:	6
50.	ՈԱ կողմից կոնկրետ գործիքներով իրականացված վերլուծությունների փաթեթ:	10
51.	Մշտադիտարկումների վերլուծությունների փաթեթներ՝ ըստ տարիների:	10
52.	Բավարարվածության գնահատման վերլուծություններ:	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Քոլեջի ուսումնական մսնաշենք,
2. Արհեստանոցներ՝ փայտամշակման, եռակցման աշխատանքների, ավտովերանորոգման և փականագործական, ավտոկառուցվածքի լսարան, սառնարանների մոնտաժման և նորոգման լսարաններ,
3. Ատամնաբուժական լաբորատորիա, գիպսանոց,
4. Քիմիայի լաբորատորիա,
5. Ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիա,
6. Խոհարարական լաբորատորիա,
6. Ռազմագիտության կաբինետ,
7. Համակարգչային լսարաններ,
8.Կարի արտադրության, վարսահարդարման և դիմահարդարման լսարան-լաբորատորիաներ
9. Լսարաններ
Հանդիսությունների դահլիճ,
10. Մարզադահլիճներ (տաղաների և աղջիկների համար նախատեսված առանձին հանդերձարաններ և լոգասենյակներ՝ համապատասխան կահավորմամբ)
11. Բուժկետեր,
12. Գրադարան,
13. Արխիվ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՍՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
- ՈԱՇ Որակավորումների ազգային շրջանակ
- ՀՀ ԿԳՄՄՆ Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
- ԻՎ Ինքնավերլուծություն
- ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
- ՌԾ Ռազմավարական ծրագիր
- ԶԾ Զարգացման ծրագիր
- ՌԾ Ռազմավարական ծրագիր
- ԶԾ Զարգացման ծրագիր
- ՌԾ Ռազմավարական ծրագիր
- ԶԾ Զարգացման ծրագիր
- ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
- ՈՆԱԿ Որակի ներքին ապահովում կենտրոն
- ՀԽՍՀ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
- ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
- ԿԽ Կառավարման խորհուրդ
- ՈւԽ Ուսանողական խորհուրդ
- ՄԽ Մանկավարժական խորհուրդ
- ԳԽ Գրադարանային խորհուրդ
- ԴԿ Դասախոսական կազմ: